

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Վերջապես Տեղեկ Շարժեցաւ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը շարունակէ հաւատարիմ մնալ իր խոստումներուն: Կոռուպցիայի դէմ պայքարի գծով իրաւապահ մարմիններու գործողութիւնները դադար չունին: Անէն օր ի յայտ կու գան նոր բացայայտումներ, որոնք կը հաստատեն ժողովուրդի մօտ տարիներ շարունակ գոյութիւն ունեցած կասկածները եւ քիչ մըն ալ աւելին: Պետական պիտոճէ կը վերադարձուին միլիոնաւոր տոլարներ, որոնք ապօրէն միջոցներով ու չարաշահումներով ձեռք ձգուած են նախկին մեծ ու փոքր իշխանաւորներու կողմէ: Ցարդ արձանագրուած բացայայտումները միայն մակերեսն են եւ անկասկած շատ աւելին ի յայտ պիտի գայ յաջորդող օրերուն եւ ամիսներուն:

Նիկոլ Փաշինեանի գլխաւոր խոստումներէն մին կը հանդիսանար 2008 թուականի Մարտի 1-ին ժողովուրդի դէմ գործադրուած բռնի միջոցներու հետեւանքով տասը անմեղ քաղաքացիներու սպանութեան բացայայտումը: Տասը տարի շարունակ այս հարցի ուղղութեամբ ոչ մէկ տեղաշարժ արձանագրուելէ ետք, քննչական մարմինները ձերբակալման առաջին որոշումը կայացուցին այդ ժամանակուայ պաշտպանութեան նախարար զօրավար-գնդապետ Սիքայէլ Յարութիւնեանի նկատմամբ՝ բանակը ներքին քաղաքականութեան մէջ միջամուխ դարձնելու մեղադրանքով:

Յեղափոխութենէն կարճ ժամանակ առաջ, ընդդիմադիր պատգամաւորներու նախաձեռնութեամբ Ազգային ժողովէն ներս Մարտ 1-ի սպանդին շուրջ տեղի ունեցած լուսններու ընթացքին, նախկին գլխաւոր դատախազին հարց տրուեցաւ, թէ արդեօ՞ք հարցաքննուած էր Ռոբերդ Քոչարեանը: Ոչ աւելի ոչ պակաս ան պատասխանեց՝ «հարցաքննել ի՞նչ ըսելու համար»:

Շնորհիւ յեղափոխութեան յաղթանակին, Ռոբերդ Քոչարեան վերջապէս կանչուած է հարցաքննութեան, պատասխանելու համար մէկ յստակ հարցումի. Ո՞վ հրաման տուաւ պաշտպանութեան նախարարին բանակը մտցնելու մայրաքաղաք եւ ապա կրակելու խաղաղ անցորդներու վրայ: Այստեղ բարդութիւններ չկան: Կամ այն է որ, պաշտպանութեան նախարարը գործած է ինքնագլուխ, որուն համար պէտք է պատասխանատուութեան ենթարկուի, եւ կամ գործած է Ռոբերդ Քոչարեանի հրամանով:

Բոլորը հաւատացած էին, որ «Մարտի 1-ի» բացայայտումը կրնայ միայն ու միայն իրականացաւ իշխանափոխութենէն ետք: Այսօր, տասնամեայ քողարկումէ ետք, «Մարտի 1»-ի գործը սկսած է շարժիլ իր տեղէն:


«ՄԱՍԻՍ»

## Մարտ 1-ի Սպանդի Գործով Ձերբակալման Որոշում Նախկին Պաշտպանութեան Նախարարին Նկատմամբ Ռոբերդ Քոչարեան Կանչուած է Հարցաքննութեան

2008 Մարտ 1-2-ին Երեւանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն վերաբերեալ, որուն գոհ գացին 10 անմեղ քաղաքացիներ, Յուլիս 3-ին քրէական գործ յարուցուած է Հայաստանի Հանրապետութեան սահմանադրական կարգը բռնութեամբ տապալելու դէպքին առիթով:

Նախաքննութեամբ ձեռք բերուած ապացոյցներու բաւարար ապացոյցներու հիման վրայ որոշում կայացուած է Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախկին նախարար՝ զօրավար-գնդապետ Միքայէլ Յարութիւնեանը իբրեւ մեղադրեալ ներգրուելու մասին այն բանի համար, որ ան, այլ անձերու հետ նախնական համաձայնութեամբ, տապալած է սահմանադրական կարգը՝ բանակը ներգրուելով ներքին քաղաքական հարցերու մէջ:

Այսպէս, պարզուած է, որ Փետրուար 19, 2008-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութեան նախապատրաստման եւ իրական-



Ռոբերդ Քոչարեան

նացման ընթացքին տեղի ունեցած են այնպիսի ընտրախախտումներ, որոնք, ըստ հասարակութեան լայն շերտերու, խախտած են այդ ժամանակ գործող ՀՀ Սահմանադրութեան 4-րդ յօդուածին մէջ ամրագրուած՝ ընտրական իրաւունքի հիմնական սկզբունքները, որուն իբրեւ արդիւնք ժողովուրդը գրկուած է ազատ ընտրութիւններ-



Սիքայէլ Յարութիւնեան

րու միջոցով իր իշխանութիւն իրականացնելու հնարաւորութենէն: Ընտրութիւններուն ընթացքին կատարուած մեծածաւալ խախտումները, որոնք հասարակական կազմակերպութիւններու, տարբեր իրաւապաշտպան կառույցներու եւ քաղաքացիներու կողմէ վերադր-

Շար.ը էջ 5

## Փոխ-Վարչապետ Աւինեանի Եւ Մշակոյթի Նախարար Լիլիթ Մակունցի Այցելութիւնները Լոս Անձելոս



Հայաստանի փոխ-վարչապետ Տիգրան Աւինեանի հանդիպումը գործարար շրջանակներու հետ

Անցնող շաբթուան ընթացքին առանձին այցելութիւններով Լոս Անձելոս կը գտնուէին Հայաստանի փոխ-վարչապետ Տիգրան Աւինեան ու նաեւ Մշակոյթի նախարար Լիլիթ Մակունց:

Փոխ-վարչապետի ու անոր ընկերակցող պատուիրակութեան համար Հայաստանի աւագ հիւպատոսութիւնը բարի գալուստի ընդունելութիւն մը կազմակերպած էր Ուրբաթ, Յունիսի 29-ին, հիւպատոսարանի դահլիճին մէջ: Հանդիպման ներկայ էին գաղութիս հոգեւոր առաջնորդներ ու քաղաքական եւ այլ կազմակերպութեան

ներկայացուցիչները: Իր ելոյթին մէջ փոխ-վարչապետ Տիգրան Աւինեան շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար եւ շեշտեց Հայաստանի Նոր կառավարութեան առաջադրանքները, որոնք պիտի ծառայեն երկրի յառաջընթացին եւ կեանքի բարելաւումին: Ապա կարեւորեց Հայրենիք-սփիւռք համագործակցութեան անհրաժեշտութիւնը: Ան ծանօթացուց նաեւ իր պատուիրակութեան մաս կազմող կարգ մը անդամները. Տնտեսու-

## Ձերբակալուած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Տնօրէն Արա Վարդանեանը

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ծառայութեան մօտ ստացուած տուեալներու հիման վրայ 2 յուլիսին իւրացումներ կատարելու, ինչպէս նաեւ հասարակական կազմակերպութեան ծառայողի կողմէն լիազօրութիւնները շարաշահելու կասկածանքով բերման ենթարկուած է «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրէն Արա Վարդանեանը:

Փաստական հանգամանքներու ճնշման ներքոյ վարդանեանը խոստովանած է, որ տնօրինելով հիմնադրամին տրամադրուած 25 միլիոն դրամի վարկային գիծով դրամատնային քարտը՝ անոր միջոցներն օգտագործած է անձնական նպատակներով, այդ շարքին անոնք ուղղելով տարբեր առցանց խաղատներու մէջ խաղադրոյքներ կատարելուն:

Ըստ իր խօսքերուն, վարկային քարտէն վատնած միջոցները վարդանեանը ետ վերադարձուցած է հիմնադրամին հանգանակուած գումարներու հաշիւին: Այնուհետեւ անձնական միջոցները կանխիկ մուտքագրած է հիմնադրամի հաշուապահութիւն՝ այդպիսով

Շար.ը էջ 5

Շար.ը էջ 5



ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Նիկոլ Փաշինեանի Վարկանիշն ու Յեղափոխութեան Ապագան

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

Հայաստանում այլեւս միայն ծոյլերը չեն խօսում այն մասին, որ նոր կառավարութիւնը ժամանակի ընթացքում կը կորցնի յեղափոխական վարկանիշը, եւ ըստ այդմ պէտք է արտահերթ ընտրութիւնը լինի հնարաւորինս շուտ, կամ պէտք է շատ ուշադիր լինի ժամանակի հարցում: Ընդ որում շատ դէպքերում պարզ է, դա ասուում է յեղափոխութեան ու նոր կառավարութեան համար մտահոգութեամբ, թէ՛ աւելի շատ հենց դրա, այսինքն՝ ժամանակի ընթացքում անյաջողութեան սպասումով: Բոլոր դէպքերում, խնդիրը, անշուշտ, ասողների մոտիւսացումն է, այլ այն, թէ ինչ են ասում: Իսկ ասուում է մի բան, որը խորքային առումով ոչ միայն իր մէջ ունի չի պարունակում յեղափոխութեան համար, այլ ըստ էութեան կարող է նպաստել յեղափոխութիւնից քաղաքական դասական համակարգ անցման սահուն ընթացքին:

Իսկ ո՞վ ասաց, որ յեղափոխութեան յաջողութիւնն այն է լինելու, որ Նիկոլ Փաշինեանը արտահերթ ընտրութեանն իր թիմով հաւաքի ասենք 90, կամ 80, կամ թէկուզ 70 տոկոս ձայն: Սրանք ամենեւին ժողովրդավարական թուեր չեն, իսկ մեր բոլորիս նպատակը, ու նաեւ յեղափոխութեան նպատակը կարծես թէ եղել է ժողովրդավարական Հայաստանի ձեւաւորումը: Հետեւաբար, ինչքան ուզել խփելու տրամաբանութիւնը պէտք է իր տեղ գիշի ընտրութեան տրամաբանութեանը: Ըստ այդմ էլ, առանցքային խնդիրը Նիկոլ Փաշինեանի եւ նրա թիմի վարկանիշը է ընտրութեան պահին:

Առանցքային խնդիրը այն է, թէ ընտրութեան պահին Նիկոլ Փաշինեանն ու նրա թիմը ինչպիսի խաղի կանոն են հաստատած լինելու, ինչպիսի օրէնսդրական փոփո-

խութիւնների են ենթարկելու ընտրական համակարգը, նաեւ կուսակցական, քաղաքական համակարգը, ստեղծելով խաղի այնպիսի կանոններ, որոնք Հայաստանում վերջապէս թոյլ կտան անցկացնել քաղաքական ընտրութիւն:

Դա է խնդիրը եւ Նիկոլ Փաշինեանի ու նրա թիմի քաղաքական ու եթէ կ'ուզէք՝ պատմական առաքելութիւնը: Վերջին հաշուով, եթէ Նիկոլ Փաշինեանը չի ունենում այն նոյն վարկանիշը, որը ունէր թաւաշայ յեղափոխութեան յաղթանակի պահին կամ այս պահին, դա դեռ ինքնաբերաբար չի նշանակելու հակափոփոխութիւն: Անհրաժեշտ է արձանագրել դա՝ յեղափոխութիւնը չի ասոցացում Նիկոլ Փաշինեանի եւ նրա թիմի ընտրական յաղթանակի տոկոսային յարաբերակցութեանը, այլ ասոցացում է ընտրական խաղի կանոններին: Կը յաջողուի՞ Նիկոլ Փաշինեանին ու նրա թիմին ապահովել այնպիսի ընտրական, օրէնսդրական ինստիտուցիոնալ այնպիսի գործընթաց, որը կ'ենթադրի բացառապէս քաղաքական պայքար, գաղափարների, ծրագրերի, առաջարկների եւ միայն դրանց պարունակութեամբ քաղտեխնոլոգիաների, ընտրական տեխնոլոգիաների պայքար, որտեղ փողի դերը ամենեւին չի լինի առաջնային ու անմիջական:

Եթէ դա կը յաջողուի, ապա Հայաստանը կ'անցկացնի իր առաջին ընտրութիւնը, ինչն էլ կը լինի յեղափոխութեան յաղթանակը: Պէտք է այն կապել Նիկոլ Փաշինեանի եւ նրա թիմի ընտրութեան պահին հիպոթետիկ վարկանիշի հետ, դրանով նաեւ հանրութեանը շեղելով բուն խնդրից եւ, կամայ թէ ակամայ, տալով իրականութիւնն ու նոր իշխանութեան գործունէութիւնը գնահատելու սխալ եւ գուցէ նոյնիսկ որոշ դէպքերում գիտակցաբար նենգափոխուած ելակէտեր:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՀՀԿ-ն Ծրագրում է Ապագայի Գանապարհային Քարտեզը

ԱՆԻ ՍԱՐԱԿԵԱՆ

Հանրապետականում արշալույսները խաղաղ չեն, հետյեղափոխական խմորումներն ամէնից շատ այստեղ են զգացնել տալիս: Օրերս յայտնի դարձաւ, որ կուսակցութեան առաջին փոխնախագահի պաշտօնից հեռանալու դիմում է ներկայացրել նախկին վարչապետ Կարէն Կարապետեանը, ինչը թերեւս բնական էր ու սպասելի: ՀՀԿ-ն տարիներ շարունակ ոչ միատարր մի կառույց է, որտեղ հանգրուանել են տարբեր խաւերի ու դասակարգերի ներկայացուցիչներ: Հետեւաբար կուսակցութեան տարբեր խաւերն անհարգաւոր են նոր մարտահրաւերներին, նոր իրողութիւններին: Բացարձակ օլիգարխիկ խաւը՝ ԼՖԻԿ Սամով, Ծմայա, Աւշարի Արայիկ եւ ուրիշներն առաջին «դասալիքները» դարձան ու մի մասը ֆորմալ, միւսը մասը դեռեւս ոչ բացայայտ խզեց ճանապարհը ՀՀԿ-ի հետ, քանզի նրանց կարգավիճակը թելադրում է լինել օրուայ իշխանութիւնների հետ, ինչը կ'ապահովագրի նրանց բիզնեսներն ու կարողութիւնները: Եթէ Սամովը Ալեքսանեանն ու մի քանիսը բացայայտ յայտարարել են արդէն ՀՀԿ-ից դուրս գալու մասին, ապա Ծմայաը ԱԱԾ-ից տուն չի գալիս, նա այնքան է տարուել նոր իշխանութիւնների «չնորհքով» գործելաոճով, որ պատրաստ է ԱԱԾ-ի արտահաստիքային աշխատակիցը դառնալ:

Կուսակցութեան երիտկարիերիստները կամ աւելի ճիշտ պատենապաշտները, որոնց պաշտօնն է ճանապարհ բացել դէպի ՀՀԿ, բնականաբար, նոր իշխանութիւն սողոսկելու սահուն ու ոչ կտրուկ ճանապարհն են նախընտրելու: ՀՀԿ-ին, անշուշտ, անդաւաճան են մնալու գաղափարական գանգուածը՝ տարեց ու երիտասարդ, որոնք ըստ էութեան տեղ չունեն գնալու ու շարունակելու են առաջ մղել սեփական գաղափարները: Ամենաբարդը քաղաքական էլիտայի, կամ այսպէս կոչուած քաղաքական օլիգարխիայի վիճակն է, սրանք այն մարդիկ են, որոնք գրեթէ բէլեր ժամանակներում զբաղեցրել են բարձր պաշտոններ՝ Վիգէն Սարգսեան, Կարէն Կարապետեան, Գագիկ Բեգլարեան եւ այլք: Մեր տեղեկութիւններով Սերժ Սարգսեանը յեղափոխութիւնից յետոյ թիմակիցներին վստահեցնում է, որ առաջի-

կայ ամիսները նեարդերի պայքար է լինելու ու հարկաւոր է համբերել ու սպասել, քանի որ ներկայ իրողութիւնը ցոյց է տալիս, որ նոր իշխանութիւնը զբաղուած է միայն «տեսարաններ» ապահովելով, իսկ առանց «հացի» հնարաւոր չէ երկար ձգել:

Իհարկէ, Սերժ Սարգսեանը իրաւացի է, բայց իր իշխանութեան աւերածութիւններն այնքան խորն են, որ մարդիկ գուցէ մի տարի էլ բաւարարուեն միայն «տեսարաններով»: Միւս կողմից ՀՀԿ-ն վերաճելու, կամ ռեսթարտի ենթարկելու ջղածիկ կոչեր են հնչում, կայ մի շերտ, որը համարում է՝ ամէն ինչ վերջացած ու յուսահատ թողնուել է բախտի քմահաճոյքին: Կայ մի թեւ, որը տեսնելով, որ երրորդ ուժ այդպէս էլ չի ձեւաւորուում եւ ներկայ իշխանութեան հիմնական մրցակիցը մնում է Գագիկ Մառուկեանը, կարծում է, որ Մառուկեանի իշխանութեան գալը աւելի է վատթարացնելու իրենց վիճակը, հետեւաբար պէտք է առաջկցել Նիկոլ Փաշինեանին, այս թեւին հարում են աւելի երիտասարդ ՀՀԿ-ականները, սակայն նախկին պաշտօնեաները առաւել հակուած են Մառուկեանի հետ համագործակցութեանը: Կայ մի թեւ էլ, որը համարելով, որ ՀՀԿ-ն այլեւս որեւէ շանս չունի, առաջարկում է նոր երրորդ ուժ ձեւաւորել, ինչին կտրականապէս դէմ է Սերժ Սարգսեանը: Քանի որ հասկանում է, որ այդպիսով աւարտուելու է իր էպոխան, բացի այդ նա վստահութիւն չունի իր ունեցուածքի ապահովարութեան հարցում: Ի վերջոյ, որ ճանապարհով կը գնայ ՀՀԿ-ն, ժամանակը ցոյց կը տայ: «ՀԱՅԵԼԻ»

Առաջին Անակնկալ Խնդիրները Կառավարութեան Համար

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանում մէկը միւսի հետեւից կոռուպցիոն սխեմաներ են բացայայտուում, չնայած ամենամեծ կեղտն այլ վայրում է: Խօսքը միջազգային պայմանագրերի մասին է, որոնք յաճախ ծառայել են իշխող ռեժիմի իշխանութեան երկարաձգմանը: Յանուն դրա իշխանութիւն ունեցողները վաճառել են ամէն ինչ, անգամ հայրենիքը: Հայաստանի նոր կառավարութիւնը բախուում է այդ խնդրին:

Առաջին անգամ դա տեղի է ունեցել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի հարցը քննարկելիս: Հաւանաբար, կառավարութիւնում քննարկել են կենսաթոշակային հիմնադրամների հետ պայմանագիրը եւ հասկացել, թէ Հայաստանն ինչ թակարդում է յայտնուել: Փորձագէտները նշում են, որ Հայաստանի նախկին իշխանութիւնը պայմանագիր է ստորագրել, որով բնակչութեան եկամուտների 10 %-ը 40 տարով «գրաւ է» յանձնել օտարերկրեայ հիմնադրամներին: Դրա դիմաց

իշխանութիւնները նոր վարկեր են ստացել, որոնք թոյլ են տուել կատարել սոցիալական պարտաւորութիւնները եւ պահել իշխանութիւնը:

Նոր կառավարութիւնն անգամ չի կարողացել յետաձգել պարտադիր կուտակային համակարգի ներդրումը: Նախկին իշխանութիւնների ստորագրած պայմանագրերի համաձայն՝ կուտակային համակարգից հնարաւոր է դուրս գալ միայն մեծ տուգանքների գնով:

Մէկ այլ հարց է գազի գինը: Մոսկուայում փութինի հետ գրուցած Փաշինեանն ասել է, որ Հայաստանի համար ռուսական գազի գինը բացառիկ է, բայց սպառողին հասնում է սահմանային գնից երկու անգամ թանկ: Բանն այն է, որ Հայաստանը գազը գնում է ըստ երկու պայմանագրերի: Դրանցից մէկը ստորագրել են երկրների կառավարութիւնները, եւ դրանով Հայաստանն իսկապէս Ռուսաստանից գնում է ամենաէժան գազը: Բայց Հայաստանի ներսում գազն այլ պայմանագրով է բաշխուում,

որը ստորագրել են Հայաստանի ու Ռուսաստանի էներգետիկայի նախարարութիւնները 2013 թուականին: Դա խաչատուակ համաձայնութեան օրինակ է, որում հայկական կողմը գրեթէ իրաւունքներ չունի: Շատ փորձագէտներ այդ պայմանագիրը գնահատել են որպէս հակապետական քայլ: Նոր կառավարութիւնը կամ պէտք է մեղադրի նախկին կառավարութեանը եւ փորձի չեղարկել այն, կամ էլ ենթարկուի դրան:

Ընդդիմադիր լրատուամիջոցներն այս օրերին յիշեցնում են նախորդ իշխանութեան եւս մէկ «խելամիտ» որոշման մասին, երբ վարչապետ Տիգրան Սարգսեանը վաճառեց Հայաստանի ոսկու ողջ պաշարը: Ilur.am-ը գրում է, որ իրականում ոսկին ոչ թէ համաշ-

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԵԱՏԱՊԱՐԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY



ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սերժ Սարգսեանի Եղբայրը Եւ Անոր Զաւակները՝ Կասկածեալներ

Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսեանի եղբայրը եւ անոր զաւակները ապօրինի հարստացման եւ յայտարարագրման ենթակալ գոյքը թաքցնելու գործով ներգրաւուած են որպէս կասկածեալներ:

Ինչպէս «Ազատութեան» փոխանցած են Յատուկ քննչական ծառայութեան (ՀՔԾ), Սերժ Սարգսեանի եղբայրը՝ Լիովա Սարգսեանը եւ անոր դուստրը՝ Անի Սարգսեանը կը կասկածուին ապօրինի հարստացման եւ յայտարարագրման ենթակալ գոյքը թաքցնելու մէջ, իսկ Սարգսեանի որդին՝ Նարեկ Սարգսեանը՝ միայն ապօրինի հարստացման մէջ:

Սերժ Սարգսեանի եղբոր եւ անոր զաւակներուն համար իբրեւ խափանման միջոց ընտրուած է ստորագրութիւնը երկրէն չհեռանալու մասին:

Ուշագրաւ է, սակայն, որ Լիովա Սարգսեանն այս պահուն երկրէն դուրս է: Անոր օգնականը «Ազատութեան» փոխանցած է, որ Սարգսեան արդէն 12 օր է Հայաստանէն կը բացակայի: Այդ պարագային պարզ է, թէ ինչպէ՞ս ան ստորագրութիւն տուած է՝ երկրէն չհեռանալու մասին:

Յիշեցնենք՝ ապօրինի հարստացման յօդուածով մեղադրուած է նաեւ Սերժ Սարգսեանի թիկնազօրի նախկին պետ Վաչական Ղազարեանը, որ ի տարբերութիւն Սերժ Սարգսեանի եղբոր եւ եղբոր զաւակներուն, ձերբակալուեցաւ, ապա աւելի ուշ կալանաւորուեցաւ:

Այն, որ ապօրինի հարստացման եւ կաշառակերութեան դէմ

պայքարի թիրախ յայտնուած են նախկին նախագահ Սերժ Սարգսեանի մերձակորները, իրաւապաշտպան Արթուր Սաքունցը բնական կը համարէ, քանի որ, ինչպէս ժամանակին Սերժ Սարգսեանը կը յորդորէր իրաւապահ մարմիններուն, պէտք է գլուխէն բռնել, եւ այժմ այդպէս ալ կ'ընեն:

Հարցին, թէ արդեօք կը կարծէ, որ գործը կրնայ հասնել անձամբ Սերժ Սարգսեանին, Սաքունցը պատասխանած է. - «Ես շատ կը զարմանամ, եթէ չհասնի Սերժ Սարգսեանին: Եթէ չհասնի, այդ դէպքում ինձ մօտ շատ աւելի լուրջ հարցեր կ'առաջանան»:

Արթուր Սաքունցը նշած է, որ պէտք է ընթացք տրուի նաեւ տարիներ շարունակ Սերժ Սարգսեանի միւս եղբոր՝ Ալեքսանտր Սարգսեանին վերագրուող մեղադրանքներուն, մասնաւորապէս պիզնես խելու դէպքերուն, որոնց վերաբերեալ, ըստ իրաւապաշտպանին, յստակ փաստեր կան. - «Ես կարծում եմ, որ այդ «50-50»-ի գոհերը պէտք է հիմա խօսեն: Որովհետեւ ապօրինի հարստացման արդէն մի մասը պայմանաւորուած է ոչ թէ պետական պիւտձէի ռեսուրսների իւրացմամբ, այլ պայմանաւորուած է դաշտում գործող այլ գործարարների ունեցուածքը կամ եկամուտները իւրացնելու դէպքերով: Ես առնուազան մէկ դէպքի մասին տեղեակ եմ, որովհետեւ ոտնձգութեան թիրախների հետ խօսել եմ. քրէական աշխարհի ներգրաւմամբ կասեցուել է այդ գործընթացը: Բայց որ ոտնձգութեան փաստը եղել է, դա փաստ է»:

Ընտրական Օրէնսգիրքի Բարեփոխումների Յանձնաժողովը Կ'ամրագրէ Փակ Ցուցակով Համաձայնական Ընտրակարգը

Տեղի ունեցաւ ՀՀ վարչապետին առընթեր Ընտրական օրէնսգիրքի բարեփոխումներու յանձնաժողովի երկրորդ նիստը, որուն ընթացքին ամրագրուեցան փակ ցուցակով հարիւր տոկոս համամասնական ընտրակարգը եւ անցողիկ շեմի իջեցումը:

«Յանձնաժողովը ամրագրեց, որ ընտրակարգը պէտք է լինի հարիւր տոկոսանոց համամասնական՝ փակ ցուցակներով: Նաեւ որոշում կայացրեցինք անցողիկ շեմի համարը ըստ այդմ՝ խորհրդարանական ընտրութիւններում նախագծում առաջարկուելիք անցողիկ շեմը որոշուեց իջեցնել մէկ տոկոսով դաշինքների եւ կուսակցութիւնների համար: Այսինքն՝ չորս տոկոս կուսակցութիւնների համար եւ վեց տոկոս դաշինքների համար», - նիստին ետք լրագրողներուն փոխանցեց առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյեանը:

«Իտէլական հասարակարգում ռեյթինկային իր գաղափարի մէջ ա, տեսական առումով բաւականին լաւ ընտրակարգ է, բայց ելնելով յստակ ժամանակից եւ տարածութիւնից, յստակ իրողութիւններից, այս պահին հնարաւոր չի դրա լաւ կիրառումը Հայաստանում, ինչի փորձը եւ ապացոյցը մենք ունեցանք, օրինակ, նախորդ ընտրութիւններին: Եւ ահա հարիւր տոկոսանոց փակ ցուցակով համամասնականի օգտին հնչեցուած փաստարկներից մէկը վերաբերում են հենց սրան, որ էս ընտրակարգը հնարաւորութիւն է տալիս ոչ թէ

կուսակցութիւնից դէպի անհատ գնալ ընտրութիւն անելիս, եւ ոչ թէ անհատից դէպի կուսակցութիւն: Ընդ որում, այդ անհատը շատ դէպքերում կարող է լինել ոչ այնքան քաղաքական մարդ: Եւ ահա ընտրութիւնները, պայմանական ձեւակերպում եմ անում, ընտրութիւնները առաւելագոյնս քաղաքականացնելու նաեւ նպատակ ունի էս ընտրակարգի ֆիքսումը: Եւ մէկ այլ փաստարկ. ընտրախախտումների մէջ մեծ դեր է ունեցել նաեւ զանազան նշանների կիրառումը, այդ թուում նաեւ գրիչներով՝ տարբեր գոյների գրիչների օգտագործումը: Եւ ահա հարիւր տոկոսանոց փակ ցուցակով համամասնական ընտրակարգը թոյլ է տալիս բացառել ընդհանրապէս գրիչների կիրառումը: Օրինակ, ոչ թէ մի թղթի վրայ լինի X կուսակցութիւն, Y կուսակցութիւն, Z կուսակցութիւն, եւ այդտեղ ընտրողը գրիչով նշի, այլ ամէն մի կուսակցութեան համար լինի առանձին մի թերթիկ եւ ծրարի մէջ դրուի էդ թերթիկը: Այստեղ ռիսքերի մի հսկայական մաս ոչ թէ կը նուազեցուի, այլ ուղղակի կը վերանայ»:

Անցողիկ շեմի իջեցման վերաբերեալ Միրզոյեանն ըսած է. - «Քննարկուել են տարբեր տարբերակների՝ սկսած շեմի վերացումից մինչեւ նոյնի պահանջները: Ի վերջոյ յանգել ենք էս լուծման՝ նաեւ հաշուի առնելով վենետիկի յանձնաժողովի շարունակական առաջարկները Հայաստանի Հանրապետութեանը, նաեւ հաշուի առնելով այլ գործօններ»:

Վաչական Ղազարեանին Մեղադրանք Առաջադրուած է



Սերժ Սարգսեանի թիկնազօրի նախկին պետ Վաչական Ղազարեան իր մօտ յայտնաբերուած կանխիկ գումարներուն հետ

Յունիսի 25-ին ձերբակալուած Սերժ Սարգսեանի թիկնազօրի նախկին պետ Վաչական Ղազարեանին մեղադրանք առաջադրուած է բարձրաստիճան պաշտօնատար անձանց բարոյականութեան (էթիքայի) յանձնաժողով ներկայացուցած յայտարարագրիներուն մէջ իր ունեցած դրամական միջոցներու իրական չափը թաքցնելու, ինչպէս նաեւ ապօրինի հարստանալու համար:

Յատուկ քննչական ծառայութեան (ՀՔԾ) քննիչի կողմէն միջնորդութիւն ներկայացուած է Ղազարեանի նկատմամբ կալանաւորումը որպէս խափանման միջոց ընտրելու համար:

«Մինչեւ Մայիսի 17-ը Ազգային անվտանգութեան ծառայութեան պետական պահպանութեան ծառայութեան պետի առաջին տեղակալի պաշտօնը զբաղեցրած Վաչական Ղազարեանի՝ Երեւան քաղաքի Տէրեան փողոցի 66-րդ շէնքի 62-րդ բնակարանում Յունիսի 20-ին կատարուած խուզարկութեամբ յայտնաբերուել է 35 միլիոն դրամ, 1.110.400 տոլար, 230.500 եւրօ, իսկ վերջինիս պատկանող աւթոտնակում Յունիսի 21-ին կատարուած խուզարկութեամբ յայտնաբերուել է

2000 տոլար», - յայտնած է ՀՔԾ-ն: Համաձայն նոյն աղբիւրի՝ Յունիսի 25-ին Վաչական Ղազարեանը «Արտշինպանքի» իր հաշուհամարէն կանխիկացուցած է 50.000 տոլար, իսկ «Եունիպանքի» իր հաշուհամարէն՝ 120.000 տոլար եւ 436.000.000 դրամ, որմէ անմիջապէս ետք բերման ենթարկուած է Ազգային անվտանգութեան ծառայութիւն, ուր նշուած գումարները յայտնաբերուած եւ գրաւուած են:

Յիշեցնենք որ, պաշտօնը դադարեցուցած պահուն ներկայացուցած յայտարարագրի մէջ Ղազարեանը նշած էր, որ միայն 7 անշարժ գոյք ունի, RANGE ROVER մակնիշի մէկ ինքնաշարժ, 11 միլիոն դրամ, 9500 տոլար, 12500 եւրօ: Ներկայացուցած է նաեւ Յունուարէն Մայիս ստացած 2.5 միլիոն դրամ աշխատավարձը:

Քրէական օրէնսգիրքը ապօրինի հարստացման յօդուածով կը սահմանէ առաւելագոյնը 3-6 տարիով ազատազրկման պատժաչափ, իսկ յայտարարագրիներուն մէջ կեղծ տուեալ ներկայացնելը կամ յայտարարագրման ենթակալ տուեալը թաքցնելը կը պատժուի առաւելագոյնը 2-4 տարի ազատազրկմամբ:

Ձերբակալուած է Գագիկ Ծառուկեանի Անվտանգութեան Ծառայութեան Պետը

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան եւ «Ծառուկեան» դաշինքի ղեկավար Գագիկ Ծառուկեանի անվտանգութեան ծառայութեան պետ էտուարտ Բաբայեանը ձերբակալուած է: Այդ մասին «Ազատութեան» փոխանցած է Քննչական կոմիտէի նախագահի խորհրդական Սոնա Տուրքեանը:

Տուրքեանի խօսքով, Բաբայեանը կը մեղադրուի դիտաւորութեամբ մարմնական վնասվածք պատճառելու մէջ:

Աւելի ուշ Քննչական կոմիտէն հաղորդագրութիւն տարածած էր, նշելով, որ «Յունիս 2-ին՝ ժամը 21:30-ին, «Արմենիա» բժշկական կեդրոն բուժօգնութեան է դիմել Երեւան քաղաքի մի բնակիչ՝ ծնուած 1968թ: Նախնական տուեալներով՝ տուժողին մարմնական վնասուածքները պատճառուել են Երեւան քաղաքի Դաւթաշէն վարչական շրջանում գործող «Օլիմպիական» մարզասրահում Յունիսի 2-ին տեղի ունեցած միջադէպի ժամանակ: Դէպքի վայրի գնութեամբ յայտնաբերուել են արնանման հետքեր»: Դէպքի աւթիւքրէական գործ յարուցուած է:

Ոստիկանութիւնը նշած է, որ ըստ տուժողի հաղորդման, անոր «հարուած է հասցրել Գագիկ Ծառուկեանը, ապա ձեռքերով եւ ոտքերով բազմաթիւ հարուածներ են հասցրել Գագիկ Ծառուկեանի անվտանգութեան ղեկավար՝ 46-ամեայ էտուարտ Բաբայեանն ու եւս մէկ անձ, որի ինքնութիւնը պարզուում է: Միջադէպին ներկայ են գտնուել Արտակարգ իրավիճակների նախարարը եւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէի փոխնախագահ Դերենիկ Գաբրիէլեանը»:

Տուժողը նաեւ ըսած է, որ «իր որդին, որը Ռուսաստանի քաղաքացի է, բռնցքամարտիկ է, աշխարհի չեմպիոն: Յաղթանակների դիմաց Գագիկ Ծառուկեանը պարգեւներ է խոստացել, սակայն որդին Հայաստանի քաղաքացիութիւն ստանալուց չետոյ հետախուզուում է՝ ժամկէտային զինուորական ծառայութիւնից խուսափելու մեղադրանքով»:

Էտուարտ Բաբայեանին յայտնաբերելու ուղղութեամբ ոստիկանութեան ծառայողները ծաւալուն հետախուզական եւ այլ միջոցառումներ սկսեցին ձեռնարկել, ինչի արդիւնքում՝ դէպքից ժամեր անց Բաբայեանը ներկայացուած ոստիկանութեան Մաշտոցի բաժին: Նա որպէս կասկածեալ ձերբակալուել է:



ԼՈՒՐԵՐ

ՍԴՅԿ Հայաստանի Վարչութեան Հանդիպումը Սփիւռքի Նախարարին Հետ



Հնչակեան կուսակցութեան պատուիրակութեան հանդիպումը Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեանի հետ

Յունիս 28-ին Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեանն ընդունած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան փոխատենապետ Վազգէն Մեսրոպեանը, քաղաքական խորհուրդի պատասխանատու Արմէն Մկրտիչեանը, արտաքին յարաբերութիւններու պատասխանատու Գեղամ Յարութիւնեանը, երիտասարդական թեկնապատասխանատու Արսէն Քուփէլեանը, Կեդրոնական վարչութեան անդամ Մանուկ Շիրտմեանը:

Վազգէն Մեսրոպեանը կուսակցութեան անունով շնորհաւորած է սփիւռքի երիտասարդ նախարարին պաշտօնը ստանձնելու առթիւ եւ աւելցուցած. «Որպէս համահայկական կառույց՝ մեր պատրաստակամութիւնը կը յայտնենք՝ պետութեան եւ նախարարութեան կողքին կանգնելու»:

Ողջունելով հիւրերը՝ նախարար Մխիթար Հայրապետեանը կարեւորած է ՍԴՀԿ-ի ազգանուէր գործունէութիւնը եւ յոյս յայտնած, որ համագործակցութիւնն

աւելի կ'աշխուժանայ: Անդրադառնալով շնորհաւորանքներուն, ան նշած է, որ թաւշեայ յեղափոխութեան ամենամեծ նուաճումը իշխանութեան փոխանցումն է ժողովուրդին: «Յաղթանակը չի եղել ու չի լինելու քաղաքական անհատի կամ կառույցի սեփականութիւն: Այն ոչ միայն Հայաստանում, այլեւ սփիւռքում ապրող իւրաքանչիւր հայի յաղթանակն է: Պէտք է պահենք այդ նուաճումը: Այս բարդ փուլում բոլորի աջակցութեան կարիք կայ՝ հաւատով, համբերութեամբ, գործով: Այս յեղափոխութիւնը նաեւ արժէքների յեղափոխութիւն է, վերագտել ենք մեր հպարտութիւնը եւ մեր ուժերի նկատմամբ վստահութիւն ենք ձեռք բերել: Սփիւռքը համախմբելու, միասնական դարձնելու նոր ուղիներ գտնելու է մշակուում: Մշակման փուլում է նաեւ հայրենադարձութեան տեսլականը, որը յստակ ազդակ է ոչ միայն մեր հայրենակիցներին, այլեւ ողջ աշխարհին: Պատրաստ ենք աշխատել սփիւռքի բոլոր կառույցների ու անհատների հետ», - աւելցուցած է նախարարը:

«Պատերազմի Անմիջական Վտանգ Չկայ»: Արտակ Դաւթեան

ՀՀ Զինուած ուժերու Գլխաւոր շտապի պետ Արտակ Դաւթեանն երէկ յայտարարեց, որ իրավիճակը նախիջեանեան ուղղութեամբ կը վերահսկուի:

«Իրավիճակը վերահսկելի է: Նորմալ աշխատանք է տարւում եւ անհանգստացնող ոչինչ չկայ», - երէկ



ՀՀ Զինուած ուժերու Գլխաւոր շտապի պետ Արտակ Դաւթեան

լրագրողներուն հետ զրոյցի ժամանակ յայտնած է ՀՀ Զինուած ուժերու Գլխաւոր շտապի պետ Արտակ Դաւթեանը՝ անդրադառնալով նախիջեանեան ուղղութեամբ իրավիճակին:

Ինչ կը վերաբերի Ատրպէյճանի մէջ սկսած լայնամասշտապ զորավարժութիւններուն՝ Դաւթեանն ըսած է, որ կը կատարուի սովորական մարտավարական աշխատանք եւ առանձնապատուկ ոչինչ կայ. «Իրենց զորավարժութիւնները մենք կը հետեւինք ուշի ուշով, պատրաստ ենք ցանկացած իրավիճակի զարգացմանը: Մենք էլ մեր փլանով մեր զորավարժութիւնն ենք անցկացնելու, իրենք էլ մեզ կը հետեւեն: Անհանգստանալու որեւէ բան չկայ»:

Լրագրողներու հարցին, թէ լարուածութեան մեծացում ու պատերազմի վտանգ կ'ա՞յ, Գլխաւոր Շտապի պետը պատասխանեց. «Պատերազմի անմիջական վտանգ չկայ, սակայն, մենք միշտ պետք է պատրաստ լինենք որեւէ զարգացման: Իսկ այն, որ պատերազմի հաւանականութիւն կայ ինչ-որ չափով, դա միշտ էլ յայտարարուել է: Զինուած ուժերը ելնում են նրանից, որ ամէն բոլոր կարող է պատերազմ սկսուել»:

Արտակ Դաւթեանի խօսքով՝ իրենց գործողութիւններն ուղղուած են անոր, որ կանխեն պատե-

րազմի հնարաւոր վերսկսումը: Ատրպէյճանի մէջ «լայնամասշտապ զորավարժութիւններ» մեկնարկած են

Ատրպէյճանի մէջ երէկ մեկնարկած են «լայնամասշտապ զորավարժութիւններ» բանակի տարբեր զորատեսակներու, զորամիաւորումներու, յատուկ զօրքերու ներգրամամբ»: Այս մասին կը հաղորդէ APA լրատուական գործակալութիւնը՝ վկայակոչելով Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան մամուլ ծառայութիւնը:

Ըստ հաղորդագրութեան, զորավարժութիւններուն, որոնք կ'իրականացուին երկրի նախագահի հաստատած փլանով եւ պիտի շարունակուին մինչեւ 5 յուլիս, կը մասնակցի 20 հազար զինծառայող, ներգրաւուած է 120 թանկ եւ այլ գրահաթեխիկա, տարբեր տրամաչափերու աւելի քան 200 հրթիռահարկային կայանք, համագարկային կրակի համակարգ եւ ականանետ, 30 միաւոր ռազմական օդանաւ:

Զօրավարժութիւններու սենարով նախատեսուած է մասնաւորապէս, «գրաւուած տարածքներու ազատագրման նպատակով լայնամասշտապ յարձակողական գործողութեան իրականացում», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Հայաստան Կրնայ «Հազարամեակի Մարտահրաւերի» Օգնութիւնը Ստանալ

Նոր Հայաստանը արժանի է ԱՄՆ-ի ամենալայն աջակցութեան: Այս մասին՝ «Ամերիկայի Ձայն»-ին տուած հարցազրոյցի մը ընթացքին՝ նշած է Միացեալ Նահանգներու քոնկրէսական ձեռնարկի ղեկավար Սթիւ Բրայնը:



Քոնկրէսական ճեքի Գանչելեան-Սթիւ Բրայնը

Անոր խօսքով՝ քոնկրէսականներու եւ գործադիր իշխանութիւններու մակարդակով քննարկումներ կ'իրականացուին՝ Հայաստանին «Հազարամեակի մարտահրաւեր» ամերիկեան պետական ընկերակցութեան կողմէ խոշոր օգնութիւն տրամադրելուն վերաբերեալ:

«Ատիկա բարդ գործընթաց է, դիւրին չէ այդ խոշոր օգնութեան վաւերացումը ստանալ, սակայն, ես

լեցուած եմ զգոյշ լաւատեսութեամբ», - ըսած է ան:

«Հազարամեակի մարտահրաւեր»-ի հաստատման պարագային՝ Հայաստանին կրնայ տրուել աւելի քան 100 միլիոն տոլարի օգնութիւն:

Քոնկրէսականի խօսքով՝ իր լաւատեսութեան աղբիւրը նոր Հայաստանն է:

Հայ Տնտեսագէտ Տարօն Աճէմօղլու Հերքած է Թուրքիոյ Մէջ Նախարար Դառնալու Լուրերը

Աշխարհահռչակ հայ տնտեսագէտ Տարօն Աճէմօղլուն հերքած է թրքական լրատուամիջոցներով տարածուած տեղեկութիւնը, ըստ որուն Թուրքիոյ մէջ նախարարի պաշտօնը զբաղեցնելու առաջարկ ստացած է: Այս մասին, ըստ Armenpress.am-ի, Աճէմօղլուն ըսած է թրքական «Ճումհուրէթ» պարբերականի հետ զրոյցի մը ընթացքին:



Աշխարհահռչակ հայ տնտեսագէտ Տարօն Աճէմօղլու

Իբրեւ պատասխան այն պնդումներուն, թէ Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Թայէպ էրտողանը մտադիր է երկրի տնտեսութեան ղեկին նախարարի պաշտօնին նշանակելու Աճէմօղլուն՝ տնտեսագէտը ըսած է, որ նման առաջարկ չէ ստացած: «Ոչ ոք կապի մէջ մտած է հետս: Կը կարծեմ՝ ատոնք պարզապէս բամբասանքներ են», - ըսած է ան:

Կամ անշարժ գոյքի հատուածէն բացի ներդրումներու աճ չէ արձանագրուած: «Թուրքիոյ տնտեսութեան մէջ կտրուկ անկման վտանգ կայ», - ըսած է տնտեսագէտը:

Յիշեցնենք, որ օրեր առաջ, թրքական լրատուամիջոցները տեղեկութիւն տարածած էին, թէ Թուրքիոյ նախագահ էրտողանը նոր կազմուող կառավարութեան կազմին մէջ մտադիր է ներառելու նաեւ աշխարհահռչակ հայ տնտեսագէտ Տարօն Աճէմօղլուն:



### «Մեր Գիւմրին» Դրամահաւաքի Ընթացքին Զանգանակուած է 562.000 Տոլար



Մօտաւորապէս 7 ժամ եւ 562 000 ԱՄՆ տոլար. Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի 4-րդ ամենամեայ դրամահաւաքը Գիւմրիի համար: Ասիկա կը նշանակէ, որ եւս քանի մը գիւմրեցի ընտանիք ընդմիշտ պիտի լքէ թիթեղեայ տնակը ու տեղափոխուի նոր ու յարմարաւէտ տուն: Այս մասին կը տեղեկացնեն «Հայաստան» համահայկական հիմնադրամի գրասենեակէն:

Մէկ բնակարանի արժէքը մօտ 25 000 տոլար է: Հեռուստամարաթոնին մասնակցած են ինչպէս հիմնադրամի բարերարները, այնպէս ալ աշխարհի տարբեր վայրեր բնակող քաղաքացիներ: Համահայկական հիմնադրամին աջակցութեամբ՝ երեք տարիներու ընթացքին 38 ընտանիք արդէն հրաժեշտ տուած է տնակային կեանքին: Իրենց հերթին կը սպասեն աւելի քան 2000 ընտանիք:

### Մարտ 1-ի Գործով Ձերբակալման Որոշում

Շարունակուած էջ 1-էն

ուած են Հանրապետութեան գործող նախագահ Ռոբերտ Քոչարեանի եւ գործող վարչապետ՝ նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանի կողմնակիցներուն, յառաջացուած են հանրութեան մեծ մասի գայրոյթը եւ փետրուար 20-էն սկսեալ, Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ կազմակերպուած են նախագահի միւս թեկնածուներուն սատարող բազմազարդ քաղաքացիներու զանգուածային հրապարակային խողովակներ, երթեր, շուրջօրեայ հանրահաւաքներ, ինչը լուրջ անհանգստութիւն պատճառած է գործող իշխանութիւններուն: Երբ հաւաքներու թուաքանակը իրաւաչափ ըլլալու մասին ոստիկանութեան յայտարարութիւններով եւ կոչերով հնարաւոր չէ եղած խոչընդոտել շուրջօրեայ խողովակահաւաքներու իրականացումը՝ գործող իշխանութեան շարք մը բարձրաստիճան պաշտօնատար անձեր, ներառեալ՝ ՀՀ պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեանը, իրականացուցած են Հայաստանի Հանրապետութեան սահմանադրական կարգը բռնութեամբ տապալելուն ուղղուած գործողութիւններ:

Հայաստանի Հանրապետութեան մէջ փաստացի հաստատած են ռազմական դրութիւն, զինուած ուժերը օգտագործած են քաղաքական հարցերու մէջ, խողովակահաւաքներու մասնակից քաղաքացիներու դէմ:

Մեղադրեալ Յարութիւնեանի նկատմամբ յայտարարուած է հետախուզում, անոր նկատմամբ իբրեւ խափանման միջոց կալանաւորուած կիրառելու վերաբերեալ միջնորդութիւն ներկայացուած է դատարան:

Յուլիս 3-ին նաեւ յայտնի դարձաւ որ, Ռոբերտ Քոչարեան «Մարտի 1»-ի գործով Յատուկ քննչական ծառայութիւն (ՅՔԾ) կանչուած է հարցաքննութեան համար: Տեղեկութիւնը իրաւապահայ կառույցը չէ հերքած:

Առայժմ յայտնի չէ, թէ Յատուկ քննչական ծառայութիւնը ինչ կարգավիճակով հրաւիրած է Քոչարեանը:

«Մարտի 1»-ի իրադարձութիւններէն տաս տարի անց, երբ իշխանութեան եկած է այն ժամանակուայ ընդդիմութեան առաջնորդներէն Նիկոլ Փաշինեանը, առաջին անգամ Ռոբերտ Քոչարեան այս գործով պիտի հարցաքննուի:

Յատուկ քննչական ծառայութեան նոր ղեկավար Սատուկ Խաչատրեանն օրերս յայտարարած էր, որ ՅՔԾ-ն քաղաքական կամք ունի «Մարտի 1»-ի գործը բացայայտելու:

### Ձերբակալուած է Արա Վարդանեանը

Շարունակուած էջ 1-էն

Թաքցնելով հիմնադրամի գումարներու վատնման հանգամանքը: Միայն վերջին շաբաթուան ընթացքին վարդանեանը հիմնադրամի դրամատնային քարտէն մօտ 14 միլիոն ՀՀ դրամ փոխանցած է առցանց խաղատուներուն, իսկ 2016-էն 2018 թուականներն ինկած ժամանակահատուածին այդ գումարը կազմած է շուրջ 130 000 000

միլիոն ՀՀ դրամ: Այժմ «Հայաստան» համահայկական հիմնադրամին ներս կը կատարուին ստուգումներ՝ հնարաւոր չարաշահումներն ու իրացումները բացայայտելու, ինչպէս նաեւ հանգանակուած գումարներու ծախսման օրինականութիւնը ճշգրտելու ուղղութեամբ: Արա Վարդանեանը ձերբակալուած է: Նախաքննութիւնը կը շարունակուի:

### Ամուլսարի Զանքավայր Տանող Երեք Ծանապարհները Կը Մնան Փակ



Ջերմուկ, Գնդեվազ եւ յարակից այլ համայնքներու խումբ մը բնակիչներ արդէն աւելի քան 10 օր փակ կը պահեն Ամուլսարի հանքավայր տանող երեք ճանապարհները: «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ անոնք կը պնդէին, որ որեւէ այլընտրանքի պատրաստ չեն եւ բողոքը կը դադարեցնեն միայն Ամուլսարի գործունէութեան դադարեցման պարագային: Յուշարարները յայտարարած են, որ թէեւ կը վստահին վարչապետ Նիկոլ Փաշինեանի կառավարութեան, սակայն ճանապարհները բանալու վերաբերեալ անոր կոչին պիտի չհետեւին, քանի որ իրենց պնդմամբ, Ամուլսարի հանքի գործունէութեան ամէն օրը կը վտանգէ իրենց բնութիւնը եւ անդառնալի հետեւանքներ առաջ կը բերէ:

Միւս կողմէ «Ամուլսարի աշխատողները լաւագոյն բնապահպաններն են» ցուցաբացատրով հանքի աշխատակիցները բողոքի ցոյցի դուրս եկած էին կառավարութեան շէնքի դիմաց՝ պահանջելով բանալ հանքավայր տանող ճանապարհները:

Երեւան եկած ցուցարարները նամակներ հասցեագրած էին վարչապետին՝ խնդրելով Նիկոլ Փաշինեանին անձամբ յորդորել

աքթիւիստները դէպի հանք տանող ճանապարհները բանալու:

«Չեն թողում՝ 1400-1500 մարդ, որ աշխատում, իրա հանապազօրեայ հացն ստանում, էսօր գնացել նստել տուն: Եթէ անօրինական ենք աշխատում, թող դրա լուծումը տան, եթէ օրինական՝ ուրեմն բացեն ճանապարհները, ժողովուրդը գնան իրանց աշխատանքին», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ իրենց բողոքը ընդհանրացուց ցուցարարներէն մէկը:

Կ'ակնկալուէր, որ այս տարի պէտք է մեկնարկէր Ամուլսարի օսկի արդիւնահանման ծրագիրը: Բնապահպան աքթիւիստներն ու շարք մը հետազօտողներ մտահոգութիւններ յայտնած են ծրագրի վերաբերեալ:

Յիշեցնենք «Ֆէյսպուք»-ի իր էջին կատարած գրառմամբ փոխվարչապետ Տիգրան Աւինեանը խնդրած էր բանալ Ամուլսար տանող ճանապարհները, քանի որ արհեստական խոչընդոտներն անհարկի կը ձգձգեն խնդիրներու վերահանումը:

Վարչապետ Փաշինեանն ալ լրագրողներուն հետ զրոյցի ժամանակ ըսած էր, որ Ամուլսարին վերաբերող յետագայ որոշումները պէտք է հիմնուած ըլլան անհերքելի փաստերու վրայ:

### Փոխ-Վարչապետ Աւինեան

Շարունակուած էջ 1-էն

թեան եւ ներդրումներու փոխնախարար Մանէ Աղամեան, փոխդրութեանց ու հաղորդակցութեանց փոխ նախարար Յակոբ Արշակեան եւ միջազգային առեւտուրի խումբի ղեկավար (Business Armenia) Նարեկ Ալեքսանեան:

Շաբաթ Յունիս 30-ին, 2018 Կլենտոնիլլի Embassy suites by Hilton հիւրանոցին մէջ, չեռ միջօրէին տեղի ունեցաւ հանդիպում գործարար շրջանակներու հետ՝ կազմակերպութեամբ Հայաստանի աւագ հիւպատոսութեան, Հայ-Ամերիկեան Առեւտրական Խորհուրդին եւ Business Armenia-ի: Այս առթիւ շահեկան զեկուցումով հանդէս եկաւ փոխ-վարչապետ Տիգրան Աւինեան տեղեկութիւններ տալով Հայաստանի ներկայ իրավիճակին եւ առեւտրատնտեսական կապերու յետագայ զարգացումներուն, նոր ներդրումներու եւ այլ բարեպատէհ հնարաւորութիւններու մասին:

Հայրենի պատուիրակութեան անդամները օգտատու հանդիպումներ ունեցան նաեւ տեղական կարգ մը առեւտրական հաստատութեանց ներկայացուցիչներուն հետ:

### Մշակոյթի Նախարար Լիլիթ Մակունցի Ելոյթը Կլենտոնիլի Մէջ

Ուրբաթ Յունիսի 29-ին, 2018 երեկոյեան ժամը 7ին, շուրջ 300 հայեր Կլենտոնիլի հանրային կեդրոնական գրադարանի սրահի եկած էին Հայաստանի նորակազմ կառավարութեան մշակոյթի երիտասարդ նախարարուհի Լիլիթ Մակունցի ելոյթը լսելու իր մշակութային ծրագիրներու մասին:

Համակրելի նախարարուհին խօսք առնելով նախ իր շնորհակալութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց սոյն հանդիպման համար: Ապա պարզեց իր համապարբակ բարենորոգութեանց ծրագիրը եւ արդիւնաւետ առաջադրանքները, որոնք պիտի ընդգրկեն արուեստի եւ մշակոյթի տարբեր բնագաւառները (թատրոն, գեղարուեստ, երաժշտութիւն, գրականութիւն, եւ այլն): Ան յոյս յայտնեց որ սփիւռքը եւս անմասն չի մնար եւ իր աջակցութիւնը կը բերէ գեղեցիկ նախաձեռնութիւններու իրականացման գործին մէջ:

Եղան բազմաթիւ հարցադրումներ ներկաներուն կողմէ, որոնց սիրով պատասխանեց նախարարուհին՝ թէ հայերէն եւ թէ սահուն անգլերէն լեզուներով:



### Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 100-ամեակի Նշումը

Կիրակի, Յուլիսի 1ին, 2018 Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (AMAA) շքեղ համերգով մը նշեց իր հիմնադրութեան 100-ամեակը, Լոս Անճելոսի Հայ Աւետարանական Միացեալ Եկեղեցոյ մէջ:

Սոյն պատմական իրադրութեան հրաւիրուած էր ընտրանի հասարակութիւն մը, որոնց մէջ էին Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան ՌԱԿԻ եւ Հ.Յ.Դ.Ի, ինչպէս նաեւ Հայց Առաքելական Եկեղեցւոյ ներկայացուցիչները:

Այս առթիւ իրենց հակիրճ ելոյթներով հանդէս եկան Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան ԱՄՆ-ի առաջնորդ Վեր. Պերճ Ճամպազեան եւ Ամերիկայի Հայ Աւետ. Ընկերակցութեան (AMAA) գործադիր տնօրէն Զաւէն Պանճեան: Անոնք գովքը հիւսնեցին աշխարհատարած այս կազմակերպութեան աստուածահաճոյ եւ հայրենանուէր ծառայութիւններուն թէ Հայաս-

տանի թէ Արցախի եւ թէ Միջին Արեւելքի մէջ: Նշենք նաեւ որ այս տարի կը նշուի նաեւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրութեան 172 տարեդարձը:

Գործադրուեցաւ օրուան պատշաճ գեղարուեստական ճոխ յայտագիր մը, մասնակցութեամբ տաղանդաւոր երգիչներ Ռաֆֆի Գերպապեանի (Թենոր), Սոնա Յովսէփանի (մեձձօ սոփրանօ), Վահագն Հովնիստի (պաս), Արփի Այնթապեանի (սոփրանօ) Ալպեո Պիւլպիւրեանի (դաշնամուր), «հարմօնի» սենեկային նուագախումբին (Խմբավար՝ Թալին Գուլուբեան եւ «Նոր Յոյս» երգիչներ քառեակին, որոնք գեղարուեստասէր հասարակութեան պարգեւեցին հոգեզմայլ պահեր:

Միջոցառումն աւարտեցաւ Վեր. Դոկտ. Արա Չազրեանի օրհնութեան աղօթքով:

Գնահատելի եւ յիշարժան 100-ամեակ մը արդարեւ:

### Հարիւրամեայ Յանճնառութիւն



Հարիւր տարիներ առաջ, 1918-ին, հոյլ մը հայորդիներ, գիտակից հայ ժողովուրդի յետ Եղեռնեան անմորմոք ցաւին եւ կակիծին եւ անսալով Աւետարանի սրբազան պատգամին ծնունդ տուին Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան:

Քսանեւեօթը տարիներ առաջ, 1991-ին, անսալով ցեղի ձայնին եւ հայրենի հողի կանչին, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը՝ ոտք դրաւ ինքնավար եւ ինքնիշխան, նորանկախ Հայաստանի եւ Արցախի բազմա-հազարամեայ հողին վրայ:

Մնացեալը պատմութեան կը պատկանի եւ անոր վկայութիւնն է: Յետ Եղեռնեան Միջին Արեւելքի անապատներու մէջ կեանքի բարակ թելին նախախնամական հրաշքով փաթթուող զանգուածներու, գաղթականական հոսանքներու բերուածով աշխարհասփիւռ տարածուող հայութեան եւ յետ անկախութեան հայրենիքի խարսխեալ հզորութիւնը եւ ընդհանրապէս հայ ժողովուրդի հոգեւոր, իմացական եւ ֆիզիքական բարօրութիւնը նպատակ ունենալով, Աւետարանչականը լուռ եւ անտրտուն ծառայեց հայ ժողովուրդին: Սկսելով պատմական հայրենիքի շրջապատին մէջ

զինք գրկաբաց ընդունող արաբական ասպնջական երկիրներէն մինչեւ Եւրոպան եւ Ամերիկաները կայք հաստատող եւ վերջապէս Հայաստանի եւ Արցախի հեռաւոր սահմաններուն մէջ ապրող հայ ժողովուրդին՝ Աւետարանչականը մատուցեց իր բազմաշերտ ծառայութիւնները:

Անխարդախ սիրով եւ համապարփակ ոգիով Աւետարանչականը իր հոգածութեան հովանին տարածեց այրիացած մօր, որբացած որդւոյն, անտէր մանուկին, հիւանդ պատանիին, անդէկ երիտասարդին, անխարխիւ չափահասին, կրթութիւն եւ գիտութիւն տենջացող ուսանողին, տարեցին եւ թոշակառուին վրայ: Անոր ուշադրութեան առարկայ դառցաւ ցեղասպանութենէն ճողոպրած հայրենակորուստ զանգուածներէն մինչեւ Միջին Արեւելքի աղետահար հայութիւնը, անկախ հայրենիքի քաղաքացին, սահմանամերձ հայ գիւղը եւ գիւղացին, բանակն ու գինձառայողը, վիրաւորն ու հիւանդանոցը, նահատակ հերոսի ծնողն ու զաւակները, բոլորին առողջութիւնն ու կենսամակարդակը, ուսումն ու ծարգացումը:

Աւետարանչականը, դարաւոր Մայր Եկեղեցիի սրբազան առաքելութեան կողքին խիզախօրէն տարածեց Աստուծոյ խօսքը, բաժնեց Քրիստոսի բարի լուրը եւ հաւատքի ակունքներուն առաջնորդեց հայ անհատը:

Ակնարկելով Աւետարանչականի հիմնադրութեան անհրաժեշտութեան՝ Ընկերակցութեան առաջին Գործադիր Քարտուղար Վեր. Գալայճեան կը բացատրէ:

«Մենք հիմնեցինք Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը, այնպատճառովորմենք մերամբողջ հոգիով կը հաւատալինք թէ մարտիրոսացեալ հայագրգը պիտի պարէրբեւեւազգ.....ծառայելուրպէս շահակիր քրիստոնէական բարձր քաղաքակրթութեան՝ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներուն մէջ: Ուրեմն, հարկեւ անհրաժեշտ էր մտնել զնովսատարեւմերագային հոգեւոր-վերաշինութեան գործին: Համոզուած էինք թէ հայկական հարագատողութեան գորուած Աւետարանական Եկեղեցին, իբրեւ հոգեւոր բարոյական զօրաւորագրակ, կարեւորութեան ակունքներուն ի կատարելի քաղաքական անհրաժեշտութեան վերաշինութեան մեծ գործին մէջ»:

Ա՛հա Աւետարանչականը՝ երեկ, այսօր եւ վաղը: Այսօր, աւելի քան երբեք, նորոգուած խինդով եւ լարուած հաւատքով կը դիմաւորենք ապագան, բեռնաւորուած անխախտ յանձնառութեամբ եւ պինդ կամքով շարունակելու աւելի փայլուն գալիքի մը տենչացող մեր առաքելութիւնը:

Եւ կ'ուխտենք: Ա- Աստուծոյ իբրեւ ազգ՝ մենք տեսած ենք Աստուծոյ շնորհքը մեր ժողովուրդի շարունակութեան մէջ որ անցած է մահուան շուքի ձորով:

Որպէս կազմակերպութիւն՝ մենք վայելած ենք Աստուծոյ հաւատարմութիւնը եւ օրհնութիւնը Աւետարանչականի առաքելութեան եւ մէկ դարեայ կեանքին մէջ:

Ուստի կ'ուխտենք շարունակել մեր առաքելութիւնը նուիրուած եռանդով եւ խանդավարութեամբ՝ անսասան կերպով տարածելով Աստուծոյ խօսքը եւ Աւետարանի բարի լուրը մեր ազգակիցներուն եւ այլոց հետեւելով Մեծ Առաջադրանքին (The Great Commission) «Գացէք բոլոր աշխարհը ու Աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն» Մարկոս 16: 15

Բ- Մեզ վստահողներուն եւ մեր անդամներուն կ'ուխտենք շարունակել ծառայել եւ գործել հիմնուած այն սկզբունքներու վրայ որոնք առաջնորդած են մեր գործունէութեան ուղին անցեալին, այսօր եւ վաղը: Ուղղամտութեան, հաշուետուութեան, թափանցիկութեան եւ պատասխանատուութեան սկզբունքներու վրայ:

Գ- Նոր Սերունդին Մենք օրհնուած ենք հիանալի եւ խոստմնալից երիտասարդ սերունդով մը որ կը գտնուի Աւետարանչականի (եւ ազգին) ղեկավարութիւնը ստանցնելու հրամայականին առջեւ: (Վկայ Հանրապետութեան հրապարակին վրայ յաղթանակ կերտող Մայիսեան սերունդը:)

Կ'ուխտենք լաւագոյնս կառավարել եւ տնտեսել մեր նախնիներու ձեռքբերումները եւ տքնիլ իրականացնել մեր հարիւրամեայ դրամահաւաքի արշաւի նպատակները:

Նաեւ կ'ուխտենք ստեղծել անհրաժեշտ աղբիւրները ապագայի կարիքները յաղթահարելու համար:

Եւ վերջապէս մեր ուխտը Դ- Մեր ժողովուրդին Ո՛չ կայսրութիւններ եւ ո՛չ կառոյցներ: Մեր ուշադրութեան առարկան հայ անհատն է:

Մենք կ'ուխտենք բարեփոխել անհատին կեանքը: Մեր հաւաքական

Շար.ը էջ 19



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



**WELCOME HOME & AUTO INSURANCE**

Along with all of our other *Trusted Insurance Services*






We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

**(818) 500 9305**



### Երբեք Այսրան Քարտ Զեմ Եղած, որ Յայ Եմ Ալեքսիս Օհանեանը Յանդիպած է Նիկոլ Փաշինեանին



Վարչապետ Նիկոլ Փաշինեանը հանդիպած է Reddit ընկերային ցանցի համահիմնադիր Ալեքսիս Օհանեանի հետ: Այդ մասին ան գրած է ֆէյսպուքեան իր էջին:

«Այսօր կառավարութիւնում հանդիպեցի Ալեքսիս Օհանեանին: Խօսելով Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թաւշեայ, ժողովրդական յեղափոխութեան մասին նա ասաց. երբեք այսքան հպարտ չեմ եղել, որ հայ եմ», - գրած է վարչապետը:

Կառավարութեան հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնը եւս տեղեկութիւն տարածած է հանդիպման մասին.

«Վարչապետ Նիկոլ Փաշինեանն ընդունել է Reddit սոցիալական ցանցի համահիմնադիր Ալեքսիս Օհանեանին:

Վարչապետը ողջունել է Օհանեանի այցը Հայաստան եւ նշել, որ ուրախ է նրա ու սփիւռքահայ մեր միւս հայրենակիցների արձանագրած իւրաքանչիւր յաջողութեան համար: Նիկոլ Փաշինեանը կարեւորել է հայութեան ներուժի իրացումը՝ ի նպաստ Հայաստանի զարգացման ու բարօրութեան:

Ալեքսիս Օհանեանը ներկայացրել է իր տպաւորութիւնները հայրենիքից եւ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած նոր կառավարութեանը մաղթել արդիւնաւէտ աշխատանք ու յաջողութիւններ: Նշելով, որ սա իր ճորդ այցն է հայրենիք՝ Օհանեանը յաւելել է, որ ուրախ կը լինի նպաստել Հայաստանում տեղեկատուական թեխնոլոգիաների

զարգացմանը: Այդ համաթեքսթում, գրուցակիցները քննարկել են ՏՏ ոլորտում համագործակցութեանը եւ Ալեքսիս Օհանեանի կողմից Հայաստանում գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւններին վերաբերող հարցերը:

Յիշեցնենք, որ հայազգի գործարարը Instagram-ի իր էջին Հայաստանէն լուսանկարներ հրապարակած էր: Անոնցմէ մէկուն կողքը գրած է՝ «24 ժամ է Հայաստան եմ: Հետեւեցէ՛ք»: Այնուհետեւ՝ հայկական շուկաներէն մէկուն մէջ առնուած լուսանկար, ուր ներկայացուած են թթուներու տեսականի, հայկական ծիրան: Գործարարը գրած է. «Այցելութիւն դէպի շուկայ. աներեւակայելի համեղ են ծիրանները», յետոյ աւելցուցած է. «Մենք շատ լաւ թթու կը դնենք: Իմ հայրը անցեալին յաճախ բանջարեղէնի թթու կը դնէր ձմրան համար: Կը կարծեմ՝ ժամանակի հարց է, որ ես ալ սկսիմ»:

Instagram-ի իր էջին հրապարակած նկարներէն մէկուն մէջ ալ արծաթէ յուշադրամով է, որ իրեն նուիրած է մանկութեան ընկերը: «Լաւագոյն ընկերներէս մէկը մանկութեան տարիներուն ինծի նուիրած էր արծաթէ հայկական մետաղադրամ՝ Նոյան Տապանի եւ Արարատի զեղազարդամբ: Այդ ժամանակուրէն էի վեր՝ ես այն միշտ կը պահեմ մօտս, աշխարհի որ մասն ալ ըլլամ», - գրած է ան:

Ալեքսիս Օհանեանը եղած է նաեւ «Թումօ» կեդրոն:

### Միացեալ Նահանգները Պատրաստ է Աջակցիլ Հայաստանին՝

Անցիալ Ուրբաթ, Ուաշինկթընի մէջ, Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը հանդիպած է Միացեալ Նահանգներու պետքարտուղար Մայք Փոմփեյնի հետ:

«Հանդիպման ընթացքում նախատեսուած է քննարկել Միացեալ Նահանգների հետ առեւտուրի եւ ներդրումների աւելացումը, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի փառատունը: Նախագահը նաեւ կիսելու է պետքարտուղարի հետ Հայաստանի նոր շրջանի իր տեսլականը», - «Ամերիկայի Ձայն»-ի հետ գրուցի ժամանակ նշած է Հայաստանի մէջ ԱՄՆ-ի դեսպան Ռիչըրտ Միլըրը:

Դեսպանի խօսքով, Միացեալ Նահանգները պատրաստ է աջակցիլ Հայաստանի նոր կառավարութեանը նոր ներդրումներ գտնելու գործին մէջ: Այս ոլորտին մէջ

Հիմնական աշխատանքը, Ռիչարդ Միլըրի խօսքով կառավարութիւնը արդէն կը կատարէ պայքարելով երկիրի մէջ կաշարակերութեան դէմ եւ ստեղծելով արդար դաշտ բոլոր գործարարներու համար:

«Անցած երեք տարիների ընթացքում ԱՄՆ-ի ու նաեւ Հայաստանի գործարարներից ես բազմիցս լսել եմ, որ երկրում գործարարութեան զարգացման հիմնական խոչընդոտը Հայաստանում արդար խաղի կանոնների բացակայութիւնն է, եւ որ համակարգը որոշ մարդկանց առաւելութիւններ էր տալիս»:

Հայաստանի նոր կառավարութեան կողմէ կաշարակերութեան դէմ կոշտ պայքարը, ըստ դեսպանի

### Կարօ Փայլանի Դէմ Նոր Արշա՞ւ



Թուրքիոյ՝ «Հայկական անհիմն պնդումներուն դէմ միաւորում» (ASIMDER) կոչուած կազմակերպութիւնն իր դժգոհութիւնը յայտնած է հայազգի գործիչ Կարօ Փայլանի՝ Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր վերընտրուելու առնչութեամբ:

Ինչպէս կը փոխանցէ Թրքական IHA գործակալութիւնը, կազմակերպութեան նախագահ Կիոքսէլ Կիւլպէյը հայազգի պատգամաւորին «Ֆաշիսթ» անուանած է ու դժգոհած, որ ան իր պատգամաւորական մանդատը որպէս «անձեռնմխելիութեան վահան» կ'օգտագործէ:

Ան պնդած է, թէ Փայլանն «ամէն անգամ կը վիրաւորէ Թուրք ժողովուրդը՝ մեղադրելով ցեղասպանութիւն իրականացնելու մէջ, եւ հանդէս կու գայ որպէս հայ լրպիստներու խօսնակ»:

Կիւլպէյն ուշադրութիւն դարձուցած է այն փաստին վրայ, որ Փայլան քրտամէտ ժողովրդադէմոկրատական կուսակցութեան անդամ է, եւ շեշտած է, որ այդ կուսակցութեան անոր՝ որպէս պատգամաւոր ընտրուելը վիրաւորանք է նաեւ քիւրտերու համար, որոնց մասնակցութիւնը Հայոց ցեղասպանութեան նոյնպէս ժամանակին շեշտուած է Փայլանի կողմէն:

### Քաթալոնիոյ Սեչ Հայկական Մաֆիայի 142 Անդամներ Ձերբակալուած Են

Կացութեան վատթարացման պատճառները փնտռած ատեն Էհմանի ուշադրութիւնը կը գրաւէ այն իրողութիւնը, թէ յաճախ, նոյնիսկ Վանի դէպքերէն առաջ, «թուրքերն ասում են, ինչ-որ չափով՝ թերեւս ճշմարիտ, որ հայերը ուղղափառապէս մասամբ անցել են ռուսների կողմը, որ հայ ժողովուրդը թուրքիայի դէմ է, որ հայ փարթիզանները Վանի տարածքում եւ Պարսկաստանում կուռել են թուրքերի դէմ, որ Տերսիմում հայերը զզրվաչաներին քարոզել են միանալ ռուսներին, որ Տիարպէթերում (Տիարանակերտ - Յ. Ի.) ռուսներ են գտել, իսկ էկիւնում՝ տինամիթ, որ ռուսների ներխուժման դէպքում հայերը երկրի խորքում կ'անցնեն թշնամու կողմը» (էջ 47):

Եռհաննէս Էհման երկու կողմերուն՝ թուրքերու եւ հայոց կարծիքները առարկայականօրէն կը չի չէ իր գեկոյցին մէջ, սակայն ան լրիւ հասկացողութիւն կը ցուցաբերէ միայն կարգ մը շրջաններում մէջ հայոց՝ ռուսներու կողմն անցնելու պատճառներուն: Էհման ընդվզումով կը նկարագրէ ինքնապաշտպանութեան համար հայոց ունե-



ցած գէնքերու հաւաքումը իշխանութիւններուն կողմէ, երբ անդին թուրքերուն ու քիւրտերուն կը թոյլատրուի պահել իրենց գէնքերը: Ան կ'ըսէ. «Ըստ այս ամէնի, կարելի է հասկանալ քրիստոնէաներին լրիւ գինաթափելու կառավարութեան խիստ միջոցառումները, մինչդեռ չնայած յանձնելու ձեւական հրամանին, թուրքերի ու քրտերի գէնքը թողնում են» (էջ 47): Էհման այնուհետեւ քննադատօրէն կը մօտենայ ձեռքարկուած քրիստոնէաներու, մասնաւորաբար հայոց ծանր վիճակին: Եթէ Վանի մէջ պայմանները դասաւորուած էին այնպէս, որ հայերը ստիպողաբար ապստամբին, ըստ Էհմանի՝ այդ բնաւ չի նշանակեր, թէ խարբերդի հայերն է որ պէտք է պատժուին, այն ալ՝ ծանրագոյն ձեւով: Այս առնչութեամբ ան կը գրէ. «Որքան էլ նրանք շատ զղջան Վանի հաւանական իրադարձութիւնների համար եւ ընդունեն քաղաքական յանցագործներին խստագոյն պատժելու կառավարական իրաւունքն ու պարտականութիւնը, այնուամենայնիւ մտածում են, որ չի կարելի իրենց պատասխանատու դարձնել Վանի քրիստոնէաների եւ այստեղի վիլայէթի մի քանի մեղաւորների համար: Տղամարդիկ, կանայք եւ երեխաները դողում են ձեռքարկուածների հարցաքննութեան ժամանակ երբեմն կիրառուող ծեծի մտքից եւ հայերի համար հասկանալի եզրակացութիւնից, որ բոլոր այդ միջոցառումների վերջը համընդհանուր ջարդն է լինելու, առաւել էս՝ այստեղ արդէն լուրեր են շրջանառուում Վանի բնակչութեան գլխին կախուած դաժան հաշուէլարդարի մասին: Մահմետականների եւ քրիստոնէաների միջեւ փոխադարձ վստահութիւնը գրեթէ լիովին չքայտել է» (էջ 47-48, ընդգծումը իմն է - Յ. Ի.):

Էհման ուրիշ կարեւոր իրականութիւն մը կը յայտնաբերէ երբ կ'անդրադառնայ հայկական կուսակցութիւններու օրինականութեան: 1908-ի Յուլիսին Մահմետադրութեան վերահսկողութիւնն էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնն ու Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը օրինական կազմակերպութիւններ էին Օսմանեան պետութեան մէջ: Աւելին, իշխող իթթիհատ վէ թէրաքի կուսակցութիւնը դաշնակցային սերտ յարաբերութիւններ ունեցած էր Հ.Յ. Դաշնակցութեան հետ: Գաղտնիք մը չէ, թէ իթթիհատը

նոյնիսկ գինած է Դաշնակցութիւնը որպէսզի ըմբոստութեան կամ չեղափոխութեան պարագային վերջինս կարենայ կառավարութիւնը պաշտպանել իրեն դաշնակից: Մայիս 1915-ին թուրքերը յանկարծ կը սկսին հայկական կուսակցութիւնները անօրինական սեպել: Այս մասին Էհման կը գրէ. «Կառավարութիւնը յատկապէս խիստ միջոցներ է ձեռնարկում «Դաշնակ» եւ «Հնչակ» միութիւնների անդամների դէմ... Բայց եւ այնպէս երբ նշուած միութիւնները ճանաչուել են պետականօրէն, ապա այժմ չէր կարելի այդպիսի մի կուսակցութեան պատկանելը դրոշմել որպէս յանցագործութիւն, կարծես կարելի է առանձին միութեանը կամ առանձին անձին վերագրել պետութեան համար վտանգաւոր կամ խռովարարական միտումներ ու խարդաւանքներ» (էջ 48):

Եռհաննէս Էհման նոյն տրամաբանութեամբ կը բացատրէ նաեւ Օսմանեան պետութեան անօրինական քայլերը հայոց ունեցած սակաւթիւ գէնքերուն նկատմամբ:



Ան կ'ըսէ. «Նոյնիսկ օրէնքով արգելուած, արդէն տարիներ առաջ ձեռք բերուած գէնքը, որ հազուադէպ չէ ծայրամասերում ապրող մահմետականների եւ քրիստոնէաների մօտ, չէր կարող լինել խռովարարական մտադրութիւնների

նախանշան, քանի որ թուրքական բնակչութիւնն այսպիսի գէնքի աւելի մեծ քանակութիւն ունի: Ըստ քրիստոնէաների բաւականին հաւաստի խօսքերի՝ իրենց գէնքը պէտք է ծառայէր զուտ ինքնապաշտպանութեան համար՝ մահմետական բնակչութեան յարձակման դէպքում» (էջ 48-49):

Թրջական կառավարութիւնը իթթիհատի տիրապետութեամբ արդէն սկսած էր հակահայկական խիստ քայլեր առնել ամէնուրեք: Էհման կը վկայէ, որ քանի մը ազդեցիկ թուրք հայատեաց տարրեր հայոց գէնքերու հարցը կ'ուճացնէին եւ զայն կառավարութեան առջեւ որպէս խթան կը գործածէին՝ արագացնելու համար հայեր կոտորելու մտադրութիւնները: Այս կէտը Էհմանի յայտնած էր խարբերդի կառավարիչը՝ Սապիթ ձեմալ Սադըրօղլուն, որու «բարեհաճութեան եւ արդարամտութեանբոլորն ալ համոզուած են» (էջ 49):

Վոլֆգանգ Կուսթի հաւաքած գեկոյցումներու ընթերցումէն ի յայտ կու գայ իրականութիւն մը, թէ թուրքիա գտնուող գերմանացի պատասխանատուները իրենց պետութիւնը տեղեակ պահած են հայոց հաւանական կոտորածներու մասին: Սակայն գերմանական իշխանութիւնները այդ բոլորն անտեսելով ոչ միայն աչք բացած են հայոց դէմ թրջական սանձարձակ ոճիրներուն հանդէպ, այլ նաեւ ամէն տեսակէտով իրենք օժանդակած են թուրքերուն ու մեղսակից դարձած Հայաստանութեան: Յանցակից ըլլալով ու այդպիսին մնալով հանդերձ, Օսմանեան պետութիւնն ու Գերմանիան այսպիսի գեկոյցագիրներով եւ այլ փաստաթուղթերով յաճախ գիրար մերկացուցած են: Գերմանացի պատասխանատուներ հայեր կոտորելու թրջական պատճառաբանութիւնները կեղծ հեռակած են եւ տուած այդ ոճիրները դատապարտող իսկական բացատրութիւններ: Այդ փաստերը ինքնին բաւարար են դատապարտելու համար թուրքերը իրենց գործած Հայաստանութեան համար:

ՀԱՅ ԵՎԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ  
Ուրախութեամբ կը յայտնենք մեր հաւատացեալներուն, թէ՛  
ՀՆՆԳՇԱԲԹԻ, ՅՈՒՆԻՍ 5-ԻՆ, 2018  
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՍԸ 10:15-ԻՆ  
ՅԻՍՈՒՄԻ ՊԱՅՏԱՌԱՎԵՐՊՈՒԹԵԱՆ (ՎԱՐԴԱՎԱՌ) ՏՕՒՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ  
ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ, ԱՆԴԱՍՏԱՆ ԵՒ ՊԻՏԻ ԲԱՇԵՈՒԻ  
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՂՈՒԹԻՒՆ  
«ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԱՏՈՒԹԻ ՄԷՋ  
Հովանաւորութեամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝  
ԳԵՐՇ. Տ. ՅՈՒՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ  
եւ մասնակցութեամբ Հոգեւոր Հայրերու  
ԱՆԴԱՍՏԱՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՂՈՒԹԻՒՆ ԲԱՇԵՈՒԻ  
ՆԱԵՒ ՀԻՒՆԱՆԴԱՆՈՑԻ ԲԱՇԵՐՆ ՄԷՋ  
EAGLE ROCK - ARARAT HOME ՄԱՍՆԱՇԵՆԲ  
Նոյն օրը կ.վ ժամը 3:30-ին ԱՆԴԱՍՏԱՆ պիտի կատարուի եւ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՂՈՒԹԻՒՆ Բաշխուի նաեւ Լոս Անճելըս - Իզլը Ռաքի «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԷՋ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝  
ԱՐՇ. Տ. ԵՐԵՄԻԱ ՔԶՆՅ. ԽԱՉԱՏԵԱՆ  
ԴԵՒԱՆ ԱՌԱՋՆՈՂՈՂԱՐԱՆԻ



### ԱՐՅԱՆԵԱՆ ՕՐԵՐ



#### ԵՐԱՆՈՒՅԻ ՂԱԶՈՐԵԱՆ

Գեղեցկուծիւն չես տեսել դեռ թէ չես եղել Ղարաբաղում: Վազգէն Օվեան Շատոնց որոշած էի յաջորդ Հայաստան երթալուս անպայման այցելել Արցախ: Առիթը ներկայացաւ այս տարուան Մայիսին, երբ Մելգոնեան կրթական Հաստատութեան 1968-ի շրջանաւարտներս վերահանդիպեցանք հայրենիքի մէջ: Մեր երեւանեան ծրագրի աւարտին, 11 հոգինոց խումբ մը Մայիսի 18-ին ճամբայ ելանք դէպի դրախտային Արցախ: Եւ այդ պայծառ առաւուսուն շքեղ Արարատը յայտնուեցաւ մեր դիմաց: Անցնող տաս օրերուն հագիւ անգամ մը կրցած էինք գայն նշմարել ամպերու ետին: Լաւ նշան էր այս: Ու ճեղքելով հայրենի գեղասքանք բնութեան բազմերանգ գորգը - Մարտիրոս Սարեանի գոյնը վկայ - կը հասնինք Հալիձոր, Սիւնիքի մարզ, Որոտան գետի ափին, նշանաւոր միջնադարեան գրչութեան կեդրոն Հարանք Անպատով (միւս բնութիւն) եւ իր բերդով, յենակէտը Դաւիթ Բեկի: Հալիձորի ճակատամարտի (1725) անհաւասար պայքարին, Դաւիթ Բեկի, Մխիթար Սպարապետի եւ Տէր Աւետիսի առաջնորդութեամբ թրքական բանակը մատնուած է պարտութեան, տալով մօտ 13,000 զոհ Հայերու 300-ին դիմաց: Այսօր Հալիձոր մեկնակէտն է «Տաթեւեր» ճոպանուղին: Հալիձորը եւ Տաթեւի վանքը իրար կապող «Տաթեւեր» ճոպանուղին, 5,752 մեթր երկարութեամբ, Guinness Book of Records-ի մէջ արձանագրուած է որպէս աշխարհի ամենաերկար առանց կանգառի յետադարձելի ճոպանուղին: Ան նախաձեռնութիւնն է IDeA-ի համահիմնադիրներ Ռուբէն Վարդանեանի եւ Վերոնիքա Չոնապեանի, մաս կը կազմէ «Տաթեւի Վերածնունդ» ծրագրին եւ բացումը կատարուած է Հոկտեմբեր 16, 2010-ին: Աւելի քան 22 միլիոն տոլար արժած ճոպանուղին Որոտանի կիրճով 40 վայրկեան տեւող հեռաւորութիւնը կրճատած է 12-ի, իսկ անոր գործածութեան գոյացած հասոյթը կը տրամադրուի Տաթեւի վանքի վերականգնումին եւ շրջանի համայնքի զարգացման: Ու ճախրելով Որոտանի կիրճին վրայէն, հեռուէն տեսնելով Հարանք Անպատը, Սատանի կամուրջը, կիրճի անտառախիտ լանջերուն ծուարած գիւղերն ու եկեղեցիները, կը հասնինք Տաթեւի վանք: Որոտանի աջ ափին կառուցուած պարսպապատ միջնադարեան այս վանական համալիրը կոչուած է Թաղէտ առաքեալի աշակերտ՝ Եւսթատիոսի անունով, որ տանջուած եւ նահատակ-

ուած է այդ կողմերը: 4-րդ դարուն իր դամբանին վրայ կառուցուած է եկեղեցի: 8-րդ դարու վերջաւորութեան Տաթեւի վանքը եղած է Սիւնեաց Եպիսկոպոսութեան աթոռանիստը, 848-ին կառուցուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, 895-906՝ Պօղոս-Պետրոս մայր տաճարը եւ մատենադարանը (10,000 ձեռագիր մատենաներով): 906-ին կառուցուած է Ս. Երրորդութեան նուիրուած ճոճուող յուշասիւնը, ծանօթ նաեւ որպէս Գաւազան: Ութ մեթր բարձրութեամբ այս սիւնը, որու գագաթը պսակուած է խաչքարով, շինուած է յատուկ թեքնիքով, որ նոյնիսկ ճոճուելէ վերջ կը վերադարձնէ սկզբնական դիրքին: Կ'ըսուի թէ նպատակը եղած է նախագրուած ցանկ թէ երկրաշարժի եւ թէ թշնամիի մօտեցող վտանգի պարագային: 9-րդ դարուն Բագրատունեաց Հայաստանի ամենէն նշանաւոր վանքը՝ Տաթեւունեցած է շուրջ 500 միւս բնութեան վարդապետարան: Այստեղ ստեղծագործած են փրկիստիկներ, երաժիշտներ, մանրանկարիչներ, գրիչներ: 14-րդ դարուն հիմնուած է Տաթեւի համալսարանը (Գլաձորի համալսարանի սաներու կողմէ) եւ մանրանկարչութեան դպրոց: Համալիրին կից կայ 18-րդ դարուն կառուցուած ձիթհան եւ Գրիգոր Տաթեւացիի դամբանը: Տաթեւի վանքը ծառայած է նաեւ որպէս կեդրոն թէ Սիւնիքի ազատագրական պայքարին (1722-30) եւ թէ Ջանգեզուրի ինքնապաշտպանութեան (1919-21):

Կը շարունակենք մեր ուղեւորութիւնը եւ Հայաստանի բնաշխարհին կը փոխարինէ Արցախինը - կանաչի բոլոր երանգներով, աւելի անտառային: Արդար է «Կովկասի Զուրիցերիան» որակումը: Սահմանային - ի՞նչ սահման, մեզի համար Արցախը Հայաստան է - ձեւակերպութիւններէն ետք կ'ուղղուինք Ստեփանակերտ: Արդէն ուշ էր, թեթեւ ընթրիք մը վերջ կը բարձրանանք մեր սենեակները: Յաջորդ առտուն, երբ պանդոկին մօտ կը քալեմ նախքան մեր ծրագրի սկսիլը, դաշտային համազգեստով խումբ մը գինուորներ կ'անցնին քովէս գրուցելով ու խնդալով: Միշտ խնդաք տղաք: Մէկ-մէկ գրկելի ու համբուրելի - Կ'այցելենք Արցախի Պետական Պատմաերկրագիտական թանգարան, հիմնուած Ստեփանակերտի մէջ 1939-ին: Հոն կը պահուին աւելի քան 50 հազար պատմամշակութային արժէքներ - բնաշխարհի, հնագիտական (անօթներ, գործիքներ, դրամներ), ազգագրական, գորգագործութեան նմուշներ, կան 1918-21 ազատագրական պայքարը, Արցախեան շարժումը, Ղարաբաղի ազատագրական

պատերազմը, հերոսներն ու յետպատերազմեան շրջանը ներկայացնող բաժիններ: Ապա կ'ուղղուինք կեդրոնական շուկայ, ուր կը վաճառուին տեղական արտադրանքներ եւ տեղույն վրայ կը պատրաստուի Արցախեան «Չինգեալով հաց»ը:

Ամարասի վանք, Մարտունի շրջանի Մաճկալաշէն գիւղին մօտ, հիմնուած է 4-րդ դարուն Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէ: Այստեղ թաղուած է իր թուր՝ Գրիգորիս, նահատակուած 338-ին, Քրիստոնէութիւնը տարածած ժամանակ: Ամարաս եղած է եպիսկոպոսանիստ կարեւոր կրօնամշակութային կեդրոն եւ այստեղ Մեսրոպ Մաշտոց 5-րդ դարուն բացած է Արցախի առաջին դպրոցը, որ անընդմէջ գործած է նոյնիսկ արաբներու եւ Լենկթիմուրի արշաւանքներու ժամանակ: 1992-ին վերաբացուած է որպէս գործող վանք: Տպաւորիչ եւ յուսադրող էր աշակերտական խումբերու ներկայութիւնը թէ թանգարանին եւ թէ վանքի բակին մէջ: Երկրորդ պարագային բոլորս հիացանք 7-8 տարեկան այդ մանուկներուն - համազգեստով եւ այբուբենը կրող փողկապներով - համարձակ եւ սահուն խօսքին՝ ուղղուած հեռուստակայանի մը աշխատակազմին: Ապրիք տղաք, շատ ապրիք: Անակնկալ մը ունինք ձեզի համար, ըսին մեզի ուղեկցող Ալլան եւ մեր վարորդ Կամոն: Քիչ ետք կը հասնինք «Տնջրի Ծառ», վարանդա գաւառի Սիտորաշէն գիւղի չինարի ծառը՝ մօտ 2035 տարեկան: ԱՊՀ տարածքին ամենաբարձր եւ ամենահին այս ծառը ունի 44 մեթր մակերեսով խոռոչ (100-է աւելի մարդ կրնայ բաւել մէջը), աւելի քան 54 մեթր բարձրութիւն (18 յարկանի շէնքի չափ), 27 մեթր բունի շրջագիծ եւ, ըստ աւանդութեան, մօտը բխող աղբիւրին քով նստած ու հանգստացած են Մեսրոպ Մաշտոց, Մովսէս Խորենացի, Սայաթ Նովա, Լէօ եւ ուրիշներ: Կ'ուղղուինք Շուշի, որու ազատագրումը շրջագարձային

եղաւ Արցախի ազատագրական պայքարին համար: Անդրդախոր կիրճերով պարսպուած հինաւուրց այս բերդաքաղաքը մինչեւ 20-րդ դարու սկիզբը եղած է Կովկասի կարեւոր քաղաք - տնտեսական եւ մշակութային կեդրոն, երկրորդը թիֆլիսէն վերջ, որու բնակչութեան մեծամասնութիւնը եղած են Հայեր: 18-19-րդ դար եղած է առեւտրական եւ արհեստագործական կեդրոն - չկար արհեստ որ բացակայէր անկէ: 1820-ական թուականներուն կը գործէին դպրոցներ, գրագարան-ընթերցարան, թատրոն (հայ նշանաւոր դերասաններու հիւրախաղերու ցանկալի վայր), տպարաններ, քսանէ աւելի թերթեր:

Շուշիի թեմական դպրոցին մէջ դասաւանդած են Հրաչեայ Աճառեան, Պերճ Պոռչեան, Մանուկ Աբեղեան, Ղազարոս Աղայեան, Վրթանէս Փափագեան: 1920-ի Մարտ 23-ին թուրքիոյ եւ Ատրպէյճանի բանակներուն կողմէ բնակչութիւնը ենթարկուած է ցեղասպանութեան, տալով 8,000 զոհ: Արցախեան ազատամարտի ընթացքին Ազերիներու կողմէ գործածուած է որպէս ռազմական լենակէտ, ուրկէ Նոյեմբեր 1991-Մայիս 1992 4,741 հրթիռ արձակուած է Ստեփանակերտի վրայ, խաղաղ բնակչութեան խլելով 111 մեռեալ, 332 վիրաւոր: 1992-ի Մայիս 9-ին «Հարսանիք Լեւներում» ռազմական գործողութեամբ հայկական ուժերը քաղաքը ազատագրած են Ազրպէյճանի Հանրապետութեան գերիշխանութեան եւ Մայիս 9-ն պաշտօնապէս հռչակուած է որպէս «Շուշիի ազատագրման եւ յաղթանակի օր»: Այսօր քաղաքը բոլորովին չէ վերակառուցուած, հակառակ Արցախի Հանրապետութեան կողմէ «պատմաճարտարապետական արգելոց» հռչակուելուն: Կը նախատեսուի մինչեւ 2020 վերականգնել գայն որպէս Արցախի մշակութային կեդրոն: Կ'այցելենք իւրաքանչիւր գե-

Շար.ը էջ 16

**Save The Date**

Fundraising in Support of  
**THE DILIJAN CHAMBER MUSIC CONCERT SERIES**  
**SEASON XIV**  
 Season starts in October

**Sunday, August 26, 5:00 PM**

Hosted by  
**Drs. Nazareth and Ani Darakjian**  
 701 St. Katherine Dr., La Cañada, CA 91011

RSVP: 818.500.9997



### ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԵՐ

Շարունակուած էջ 15-էն

ղեցկութեամբ Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ մայր տաճարը, կառուցուած 1867-1887, զանգակատունը 1858-ին: Չանգակատան երկրորդ յարկի չորս անկիւններուն կան հրեշտակներու արձաններ, պատկերուած նաեւ քաղաքի զինանշանին վրայ: 1920-ի Շուշիի ջարդերէն ետք Ազերիներ գործածած են զայն նախ որպէս ամբար, ապա՝ աւտոտնակ (կառած): Մինչեւ ազատագրումը կը գտնուէր կիսաւեր վիճակի մէջ, իսկ Ղարաբաղեան պատերազմի ժամանակ այստեղ էր Ազերիներու հրթրաւոր համակարգի պահեստը: Ազատագրումէն յետոյ վերանորոգուած է ամբողջութեամբ եւ վերաբացուած Յուլիս 19, 1998-ին, Քրիստոսի Պայծառակերպութեան (Վարդավառ) օրը: Հոկտեմբեր 16, 2008-ին 500 զոյգ ամուսնացան այստեղ (200 եւս Գանձասարի մէջ): Կ'անցնինք Գլխավար Աղայի վերին մզկիթէն (18-19-րդ դար): 1992-ի Շուշիի ազատագրումէն ետք եղած է կիսաքանդ վիճակի մէջ: Իսլամական մշակութի ժառանգութեան պահպանման աշխատանքներու ծիրէն ներս 2008-10 վերականգնուած է տանիքը եւ տարածքը մաքրուած: Զրդողւոյ: Անհասկնալի բառ մը, որ կրկնել տուի Ալլային արտասանել կարենալու համար: Կատարոտ կամ Զրդողւոյ Շուշիի եզրին գտնուող 5 հեկտար տարածութեամբ դաշտավայր մըն է, Արցախի ամենասիրելի վայրերէն մին, ոչ միայն իր պարզեւած հիանալի տեսարաններուն, այլեւ Շուշիի ազատագրումին մէջ իր խաղաղած դերին համար: Հոռոտի կիրճի այս ձիգ պատէն բարձրացած են Արցախի ազատամարտիկները «Հարսանիք լեռներում» գործողութիւնը իրականացնելու համար, անակնկալի բերելով թշնամին: Շուշիին հետ մեր ծանօթացումը կ'աւարտենք այցելելով դէպի Ստեփանակերտ տանող ճանապարհի մուտքին յուշակոթող դարձած քաղաք մտնող առաջին հրասայլը, որ վառ կը պահէ իրենց կեանքի գնով հայրենիք ազատագրած մարտիկներուն յիշատակը: Յաջորդ օրը կը սկսինք Արցախի խորհրդանշական դարձած «Մենք ենք մեր սարերը» կամ «Մամիկ-Պայպիկ» յուշարձանով: Ստեփանակերտի մուտքին մօտ գտնուող յուշարձանը, կառուցուած 1967-ին (քանդակագործ Սարգիս Բաղդասարեան), առաջին անգամ ցուցադրուած է իտալիոց Քարարա քաղաքի միջազգային ցուցահանդէսին: Խորհրդային Ատրպէյճանի ղեկավարութիւնը փորձած է արգելք հանդիսանալ անոր տեղադրումին, սակայն ձախողած է: Առանց պատուանդանի յուշարձանը, որու կերպարները կը թուին հողէն բարձրացած ըլլալ, ոտքերը ամուր պահելով հողին մէջ, կը խորհրդանշէ հողի եւ ժողովուրդի արմատներուն կապը:

Կը ճամբորդենք նոնենինե-

րու, Աղտամի աւերակներուն, Խոջալուի հարեւանութեամբ, հեռուէն կը տեսնենք Ասկերանի ամբողջ ու պարիսպը, Կաշաղակաբերդը (նաեւ Խաչէնի Ամրոց) եւ կ'ուղղուինք Տիգրանակերտ, պատմական հայկական քաղաք, կառուցուած Մարտակերտի շրջանի Խաչէն գետի ափին Ք.Ա. 1-ին դարուն Մեծ Տիգրանի կողմէ: Իր անունով հիմնուած չորս քաղաքներէն միակ յայտնաբերուածն է այս, որ որպէս բնակավայր գոյութիւն ունեցած է մինչեւ 7-րդ դար: Ճշգրիտ տեղը յայտնաբերուած է 2005-ին Վանքասարի մօտ, պեղումները սկսած 2006-ին: Ուսումնասիրուած են միջնաբերդը, պարիսպները (որմնաքարերու իւրաքանչիւր «ծիծեռնակապոչ» կապերով), քաղաքի կեդրոնամասը, պազիլիք եկեղեցին, արհեստանոցներ (ապակիի, եւլն), 600 լիտրոց կարաս, գոհարեղէններ, հայերէն եւ յունարէն արձանագրութիւններ: 2010-ին հիմնուած է Թանգարան, ուր կը ցուցադրուին հնգամեակին յայտնաբերուած նմուշները:

Կը հասնինք Մարտակերտի շրջանի Վանք գիւղին մօտ գտնուող Գանձասար վանական համալիր, որ իր անունը առած է դիմացի բլուրի գանձերէն (արծաթ, եւլն): Կառուցուած է 1216-1238 : Գլխաւոր տեսարժան վայրն է Սբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին: Եղած է առաջնորդարան եւ Խաչէնի իշխաններու տոհմական տապանատուն, Հասան-Ջալալեան տոհմի հոգեւոր եւ մշակութային կեդրոն, 1400-1816 Աղուանից կաթողիկոսներու նստավայրը: Եղած է 18-րդ դարու ազատագրական շարժման կեդրոն, Իսրայէլ Օրիի եւ Յովսէփ Էմինի կաթողիկոսներուն հետ տեսակցելու վայր: Այստեղ գրուած է Յովհաննէս Բ. Կաթողիկոսի «Դատաստանագիրք»ը եւ ըստ պատմական փաստերու Գանձասարի մէջ ամփոփուած են Յովհաննէս Մկրտիչի գլուխը, հօր՝ Ջաքարիայի արիւնը, Ս. Գրիգոր Լուսաւորիչի «Օրհնուսոյց Սուրբ Ծնոտը», թողան՝ Գրիգորիսի եւ այլոց նշխարները: Սորպոյնի Բիւզանդական արուեստի մասնագէտ Charles Diehl (1859-1944) Գանձասարը կը դասէ համաշխարհային ճարտարապետութեան գանձարանի հայկական ճարտարապետութեան հինգ գլուխ գործոցներու շարքին: Անոնք են, Գանձասարէն գտնուող Աղթամարի Ս. Խաչ, Էջմիածնի Ս. Հռիփսիմէ, Անիի Ամենափրկիչ եկեղեցիները, Հաղբատի վանքը: Գանձասարի համալիրին կից կը գործէ Մերոպ Մաշտոցի անուան մատենադարան-Գանձասար մշակութային կեդրոնը, որ ունի գիտական ուսումնասիրութիւններու բաժին եւ թանգարանային համալիր, ուր ցուցադրուած են պատմական Հայաստանի Արցախ եւ Սիւնիք նահանգներուն մէջ գրչագրուած 100-է աւելի ձեռագիր մատենաներ, Արցախի պատմութեան առնչուող հազ-

ուագիւտ վաւերագրերու բնագրեր ու ընդօրինակութիւններ, հնատիպ գիրքեր, Երեւանի Մատենադարանին մէջ պահուող ձեռագրերու կրկնօրինակներ:

Կ'ուղղուինք Վանք գիւղ, որու մուտքին կան գոյգ մը առիւծի արձաններ: Գիւղի ծնունդ, անցեալ տարի մահացած բարերար Լեւոն Հայրապետեանի ծախսերով կառուցուած են հիւրանոցներ, ճաշարաններ, վերանորոգուած են Գանձասարի վանքը, կենդանաբանական եւ բուսաբանական այգիները, ճանապարհներ, հիմնուած ռազմական ակադեմիա: Իր հօր՝ երկարամեայ տնօրէն Գուրգէն Հայրապետեանի անունը կը կրէ տեղուց արդիական միջնակարգ դպրոցը: Սքանչելի բնութեան ծոցը, գետափին, կը տեղաւորուինք սեղաններուն շուրջ ճաշելու: Սպառնալից ամպեր կը մթազնեն երկինքը, բայց մենք ապահով կը զգանք ճաշարանի հովանիին տակ: Տեղատարափ անձրեւը, սակայն, ի վերջոյ մեզ կը ցրուէ աջ ու ձախ: Մեր պտոյտի վերջին օրը կ'այցելենք Դաղիվանք, Արցախի Շահումեան շրջանի միջնակարան վանական համալիրը, որ ըստ աւանդութեան հիմնուած է Քրիստոսի առաքելներէն Թադէոսի աշակերտ Դաղիի կողմէ 1-ին դարուն: Ան Քրիստոնէութիւն կը քարոզէր Քարվաճառի շրջանը, ուր մահացած է քարկոծումով: 2007-ին իր մասունքները գտնուած են եկեղեցիներէն մէկուն խորանին տակ: Կառուցուած 9 - 13 դար, ունի երկու ժամատուն, երկու եկեղեցի (կեդրոնական կառուցը Ս. Աստուածածին կաթողիկէն է (1234), միաբանական խուցեր, հիւրատուն, գործատուն, զրատուն: 1145-ին աւերուած է Սելճուքներու կողմէ, վերանորոգուած 1170-ին: 2 խաչքար եւ արձանագրութիւններ կը պատմեն 12 - 13 դարու դէպքերը: Կը հանդիպինք վանահայր Տէր Յովհաննէս Յովհաննիսեանին, որ կու տայ Յուլեալ տեղեկութիւններ: Ժամանա-

կին համալիրը ունեցած է 200,000 հեկտար կալուած, բայց 1920-ի Ատրպէյճանին բռնակցումէն վերջ գրկուած է կալուածներէն ու դադարած գործել: 1960-ական թուականներուն Ատրպէյճանի իշխանութիւնները համալիրի տարածքին հիմնած են գիւղ, որ վնասած է շէնքերը եւ որմնանկարները (ծածկուած էին մուրով): Ազատագրուած է 1993-ին, վերաբացուած 1994-ին, վերանորոգումի մէջ է 1999-էն ի վեր (կ'ակնկալուի ամբողջացնել մինչեւ 2020): Եկեղեցին կը գործէ 1/1/2016-էն: Նոր ճանապարհի կառուցումը բազմապատկած է այցելուներու թիւը: 2017-ի Չատիկին ներկայ գտնուած է 3,000 հաւատացեալ, մկրտուած են զինուորներ: «Ղարաբաղի անկախութեան օրը Արցախ անունով երեխայ մկրտեցի», կ'ըսէ քահանայ: Մեզի հետ բերած ուտելիքներով կը ճաշենք Թարթառ գետի ափին: Այս գետի երկայնքին կը գտնուին Դաղիվանքը, Քարվաճառը, Սարսանգի ջրամբարը: Ու կը բռնենք վերադարձի ճամբան, այս անգամ վարդենիս-Մարտակերտ ճանապարհով: Կը մտածեմ թէ մեր չնչին լուծման ալ օժանդակած է անոր շինութեան:


Անմոռանալի օրեր էին: Ճանչցանք Արցախի չքնաղ բնութիւնը, իրար գերազանցող տեսարաններով, եւ պատմամշակութային տեսարժան վայրերը, համտեսեցինք ջինգեալով հացը եւ թթի օդին, նշեցինք Հրաչին եւ Ֆլորային ծննդեան տարեդարձները - ինչ զուգարկապետութիւն: Երախտապարտ ենք Շահէին, որ սիրով ստանձնեց պտոյտի կազմակերպումը: Կը յուսամ թէ մենք ալ գոհ ձգեցինք զինք դժուարահաճ չըլլալով: Ծնորհակալութիւն Ալլային եւ Կամոյին - որուն երգելու ձիրքն ալ յայտնաբերուեցաւ - իրենց արհեստավարժ եւ նոյն ատեն բարեկամական վերաբերմունքին համար: Անմոռանալի Արցախ: Մեր սրտերուն մէջ եւ: Մինչ նոր հանդիպում:

**St. Gregory Armenian Church**

---

**SAVE THE DATE**

Under the Auspices of  
His Eminence  
**Abp. Hovnan Derderian**  
Primate of the Western Diocese



**Celebration of the 20<sup>th</sup> Anniversary of Ordination  
To the Sacred Priesthood of Christ  
And the 50<sup>th</sup> Anniversary of Service to the  
Armenian Apostolic Church**

of  
**Rev. Fr. Archpriest Sarkis Petoyan**  
On Sunday, September 9, 2018  
10:30 a.m. Celebration of Divine Liturgy  
Immediately Followed by a Luncheon at Geragos Hall  
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107

**SEROP'S CAFE**

**GREEK & LEBANESE FOOD**

SERVING BATON ROUGE SINCE 1979



### ՏՂԱՄԱՐԴ, ՈՐՈՒՆ ՀԵՏ ՊԵՏՔ ԶԷ ԱՍՈՒՍՆԱԿԱԼ

Պէտք է ամուսնանալ այն տղամարդուն հետ, որ վստահ է, որ իր բոլորը ըրածները հիասքանչ են:

Որ չի կրնար անցնիլ հայելիին քովէն՝ առանց ինքն իրմով հիա նալու:

Որ ամէն շաբաթ կամ աւելի յաճախ կը փոխէ սիրելին:

Որ խաղաքարտի եւ ալքոհոլի հանդէպ տկարութիւն ունի:

Որ մշտապէս կը կրծէ եղունգները կամ աղտոտ եղունգներով կը պտըտի:

Պէտք է ամուսնանալ չափազանց հիւանդ տղամարդու հետ, քանի որ ընտանեկան օճախը առողջարան չէ, այլ՝ բոյն, ուր պէտք է նոր, առողջ սերունդ ծնի եւ մեծնայ:

### ԻՆՉՊԵՍ Կ'ԱԶԴԷ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՍՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿՐԱՅ

1 տարուան տարիքային տարբերութիւն. կը դասաւորուին կայուն գործնական փոխյարաբերութիւններ: Նման գործընկերութիւնը կը նպաստէ նիւթական վիճակի կայունացման: Նման ամուսնութիւնը ճիշդ պիտի ըլլայ կնքել հաշուարկով:

2 տարուան տարբերութիւն. կապի պատրանքային ձեւ կու տայ: Ամուսնութիւնը կրնայ տեւել միայն հոգեւոր հիմքի վրայ եւ ընդհանուր շահերու պարագային: Հասարակ յուզական կապի պարագային սկզբնական հրապոյրը աւելի ուշ յաճախ կը վերածուի տհաճութեան եւ ամուսնութիւնը կրնայ չդիմանալ:

3 տարուան տարբերութիւն. կը յանգեցնէ շատ լարուած փոխյարաբերութիւններու, որոնք կառուցուած են պայքարի եւ մրցակցութեան վրայ: Այս գոյգի յարաբերութիւնները յաճախ կը յայտնուին սահմանագիծին վրայ՝ մագէ կախուած:

Բացի այդ, գուզընկերներէն մէկուն վրայ սովորաբար կ'իջնայ փորձութիւններու, գայթակղութիւններու ծանր բեռը, եւ ան յաճախ պատրաստ է խաբելու իր սիրելին:

4 տարուան տարբերութիւն. ընկերութեան, փոխօգնութեան, համագործակցութեան վրայ կառուցուած քիչ թէ շատ ներդաշնակ ամուսնութեան շատ հնարաւորութիւններ կու տայ: Սակայն, ցաւօք, ժամանակը կրնայ յարաբերութիւնները փոխել դէպի վատը:

5 եւ 10 տարուան տարիքային տարբերութիւնը արդէն պատահական հանդիպում չէ: Զուգընկերներուն միջեւ կայ քարմայի կապ, որ կը պահանջէ կատարել փոխադարձ պարտքերը: Քարման անոնց իրար մօտ կը պահէ: Անոնք պէտք է կեանքի ընթացքին երթան մէկ ուղիով: սակայն ատոր հետ մէկ-տեղ՝ անոնցմէ մէկը պէտք է առաջնորդող ըլլայ, միւսը՝ հետեւող:

6 եւ 9 տարուան տարբերութիւն. փոխադարձ կապի շատ ծանր ձեւ է: Այս միութեան մէջ փորձութիւնները, պայքարը եւ մերձաւոր հարազատներու «խաղեր»-ը անպակաս են: Նման միութիւնը լաւ է այն մարդոց համար, որոնք հանգիստ ընտանեկան կեանքէն կը ձանձրանան եւ սուր զգացողութիւններ կ'ուզեն:

7 եւ 14 տարուան տարբերութիւն. գուզընկերներու միջեւ կ'ապահովէ ամենախորհրդաւոր

Կարելի է ամուսնանալ տղամարդու հետ, որ յայտնի է իբրեւ անխելք մարդ:

Որ կնոջ ու զաւակներու բարեկեցիկ կեանքին համար վաստակելու նպատակ չունի:

Որ ազահ է եւ չի փափաքիր կնոջ նուէրներ մատուցել, գայն թատրոն եւ հանգիստի տանիլ:

Որ չ'ուզեր հասկնալ, որ կինը պէտք է ուրախ եւ երջանիկ ըլլայ, քանի որ անոր տրամադրութիւնն ու առողջութիւնը բարեկեցիկ ընտանեկան կեանքի հիմքն է:

Որ անհասարակ շիտ բնաւորութիւն ունի:

Որ չի կրնար նոյնիսկ հինգ վայրկեան հանգիստ նստիլ:

Հարց կ'առաջանայ. ո՞վ մնաց, որուն հետ կարելի է ամուսնանալ..

կախուածութիւնը: Ընտանեկան կեանքի մէջ՝ գաղտնիքներ, թիւրըմբռնում, համաձայնելու անկարողութիւն: Նման կապը անկանխատեսելի է եւ յայտնի չէ, թէ ինչի կը յանգեցնէ: Կա՞մ վերածնման կա՞մ ներքին խորտակման: Նման միութիւնները լաւ են գաղտնի սիրավէպի համար:

8 տարուան տարիքային տարբերութիւն. հոգեկան յարմարաւէտութիւն կու տայ եւ ամուսնութեան ամենաներդաշնակ ձեւ: Զուգընկերներու միութիւնը հիմնուած է խոր կապուածութեան եւ փոխօգնութեան վրայ: Յարաբերութիւններու կայունութիւնը, միմեանց նկատմամբ վստահութիւնը կ'օգնեն բացառապէս անոնց ստեղծագործակա սկիզբը: Իսկ ատիկա աւելի շատ կը նպաստէ երջանիկ եւ բարեկեցիկ ամուսնութեան:

11 տարուան տարբերութիւն. կը յանգեցնէ ամենամեծ խառնուածի հետեւանքներու: Զուգընկերներու միջեւ կը ստեղծուին «ամէն ինչ կամ ոչինչ» տեսակի յարաբերութիւններ: Հնարաւոր են մշտական փոփոխութիւններ, առաջատարութեան համար յամառ պայքար, չդադարող քննադատութիւն: Այս ամուսնութեան մէջ կայ մէկ լաւ գիծ՝ անհաշտ գոյգը որեւէ պահու կրնայ ամէն բան նորէն սկսիլ:

12 տարուան տարբերութիւն. գուզընկերներու միջեւ փոխ ըմբռնման եւ փոխադարձ գործողութիւններու հակայական դժուարութիւններ, որոնք կը յանգեցնեն ամուսնութեան ան յուսալիութեան: Միութիւնը կրնայ լաւ սկսիլ, իսկ յետոյ քանդուիլ: Անիկա կը քոտ է եւ երկակի: Զուգընկերներէն մէկը սովորաբար միշտ խոչընդոտներ կը ստեղծէ միւսի գարգացման ճանապարհին: Նման միութեան հետեւանքները կրնան ամենածանրն ու սարսափելին ըլլալ:

13 տարուան տարբերութիւն. կը յանգեցնէ գուզընկերներու յարաբերութիւններուն մէջ գերբնական ուժերու միջամբնութեան: Փոխադարձ կապը պարզ է, կանխատեսելի, միսիոներական, որ կը տանի հոգեւոր վերածնութեան, գիտակցութեան վերաճեաւորման, լուսաւորման: Ատիկա ճանապարհ է դէպի երկինք կամ ճանապարհ դէպի մահ:

15 տարուան տարբերութիւն. կու տայ քարմայի ամենագորաւոր քաշողականութիւն: Նման մարդիկ

### ՊԱՏՃԱՌՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ԽԱՆԳԱՐԵՆ ԱՍՈՒՍՆԱԿԱԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԸ

1) Դուք միայն ձեր մտքերուն մէջ կ'ուզէք ամուսնանալ-

Այսինքն ուղեղով կ'ուզէք, իսկ հոգեբանօրէն առայժմ պատրաստ չէք կամ ալ սկզբունքօրէն կը վախնաք ամուսնութեան: Դուք ընտանիքի իրական պահանջմունք չունիք, ոչ ալ ներքին պատրաստակամութիւն ունիք՝ գայն ստեղծելու: Զբօսնելուն, ուրիշներու աչքին երեւալուն, յարաբերութիւն ունենալուն դէմ չէք, բայց աւելի հեռուն չէք երթար:

Դուք հաւանաբար մեծցած էք ինքնատիպ ընտանիքի մէջ՝ անյաջող, անառողջ: Եւ ծնողներու յարաբերութիւններուն մասին յիշողութիւնները չեն տրամադրեր հասարակութեան նոր միաւոր ստեղծելուն եւ ամուսնութեան մէջ ներդաշնակութեան յոյս չեն տար: Աւելին՝ դուք նոյնիսկ դուք ձեզի չէք խոստովանիր, որ պատրաստ չէք լուրջ յարաբերութիւններու, բայց այլ կերպ կը ձեւակերպէք. «Ոչ ոք կը հաւնիմ»:

Բնականաբար չեմ կրնար հանդիպիլ անոնց հետ, որոնք հաճելի չեն ինձի համար»: Սեռային յարաբերութեան հետ կապուած նոյն՝ ծանր վիճակն է. «Առանց սիրոյ սեռային յարաբերութիւնը զգուշացնելի է: Ու քանի որ ես ոչ մէկը կը սիրեմ...»: Բնականաբար, պարզ է: Ի միջի այլոց, տղամարդիկ, որոնք նոյնպէս պատրաստ չեն նման մտերմութեան, կը սիրեն պատմել, որ իրենց կը հանդիպին չգրաւոր աղջիկներ. մէկուն օտքին մատը ծուռ է, միւսին աչքը շիլ է... Ատիկա յարաբերութիւններէն ամենախակական խուսափում եւ վախ է: Երբ մարդը պատրաստ չէ ամուսնութեան, ոչ ալ յարաբերութիւններու, ան ենթակիտակցաբար կ'ընտրէ այնպիսի գուզընկերներ, որոնց հետ անհնար է կառուցել ստոյնք:

2) Ամուսնութիւնը ձեզի համար ինդիքներ լուծելու միջոց է-Տղամարդիկ անմիջապէս կը ճանչնան այն կանանց, որոնք կը փնտռեն, թէ որուն վրայ կարելի է դնել «տառապալի հոգեբուն բեռը» (եւ կը խուսափին անոնցմէ՝ գիտակցաբար եւ անգիտակցաբար: Որոշն համար հաճելի է օգտագործուած ըլլալը). նմաններու ճակատին գրուած են անոնց բոլոր ծանր հոգեբանական եւ կենցաղային խնդիրները: Եւ աղջիկը չի հասց-

ներ բերանը բանալ, երբ տղամարդը կը հասկնայ, որ իրմէ բան մը կ'ուզեն եւ նոյնիսկ լարուած կը սպասեն... Առողջ իրավիճակի մէջ մարդը կ'ուզէ ո'չ թէ ամէն գնով ամուսնանալ, այլ կ'երագէ հանդիպիլ, սիրել, սիրելի մարդու հետ միասին ըլլալ, անոր հետ զաւակներ ունենալ... Իսկ երբ կը գրաւէ ամուսնութեան գաղափարը իբրեւ այդպիսին եւ նպատակը, օրինակ, «ոճային հարսանիքն է»՝ զգեստով եւ քօղով, ատիկա նախապէս տապալած պատմութիւն է:

3) Դուք ձեր մտքերով կը շարունակէք մնալ նախորդ յարաբերութիւններուն մէջ- (չաւարտած յարաբերութիւններու համախառնիչ) եւ նոյնիսկ ամուսնալուծութեանն եւ բաժանումէն ետք՝ ներքին լարուած երկխօսութիւններ կը վարէք, օրինակ, կը ձեւակերպէք, թէ ալ ինչ կրնայիք ըսել այն վէճին ընթացքին: Եւ բոլորը կը համեմատէք նախորդին հետ... Եթէ ձեզի հետ նման բան կը կատարուի (մարդը չկայ, իսկ յարաբերութիւնները, կը թուի՝ կան), կա՞մ սպասեցէք մինչեւ այդ վիճակը ինքնուրոյն անցնի, կա՞մ գազէք հոգեբանի մօտ: Միայն մէկ պայման կայ, որ ամբողջ կեանքի ընթացքին միայն մէկ մարդ սիրէք, այդ մարդուն հետ ապրիք, անոր հետ ժամանակ անցընէք եւ ծերութեան օրերուն ձեռքը բռնած լողափի երկայնքով քալէք:

Այդ պայմանը կայուն, հասկնալի, կանխատեսելի հոգեկան աշխարհն է: Եթէ ձեզի հարցնեն՝ «դուք երբեւէ սիրած էք», կը պատասխանէք՝ «ի հարկէ»: Եւ սէրը կը չափէք տառապանքի չափով: Իսկ առողջ յարաբերութիւնները կը չափուին երջանկութեան մակարդակով: Այն կանայք, որոնք չեն կրնար իրենք գիրենք ապահովել, կախուածութեան մեծ խնդիրներ ունին անկէ, ով որ կը հոգայ իրենց ապրուստը: Ինչպէս վաղի բնութեան մէջ է, այնպէս ալ կեանքի. ան, որ առողջ է, միշտ միջոց կը գտնէ ինքզինք կերակրելու: Բազմաթիւ հնարաւորութիւններ կան: Իսկ եթէ դուք չէք կրնար ապրելու միջոց գտնել, ուրեմն խնդիրը հաստատ տարբերակներու բացակայութիւնը չէ, այլ՝ ձեր անձնական հոգեբանական խնդիրները:

### ՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՓԱՍՏԵՆ, ՈՐ ԻՍԿԱՊԵՍ ԽԵԼԱՅԻ ԿԻՆ ԵՍ

1) Սեւեռուած չես տղամարդոց վրայ: Ի հարկէ, կեանքիդ մէջ տղամարդիկ եղած են, կան ու պիտի ըլլան, բայց աշխարհը չի դառնար տղամարդոց շուրջ: Կը հասկնաս, որ հակառակ սեռի հետ յարաբերութիւնները կարեւոր են, բայց երջանկութեան միակ պայմանը չեն: Ունիս զբաղմունք, ընկերներ եւ աշխատանք: Կը գնահատես դուն քեզ եւ կը կարծես, թէ իբրեւ կին պիտի կայանաս այն ժամանակ, եթէ հանդիպիս «այնմիակին»:

2) Ազնիւ ես դուն քեզ հետ: Գիտես, որ դառն ճշմարտութիւնը միամիտ երեւակայութեանն լաւ է: Ուստի անհետեւ արդարացումներ չես որոններ քեզի եւ տղամարդու համար: Եթէ տղամարդը չի հեռաձայներ, կը նշանակէ՝ դուն անոր համար հետաքրքրական չես: Վե՛րջ: Մեծ մասնայի հիւանդութեան կամ գիշերը ժամը 12-ի ժողովներու մասին արդարացումները աւելի լաւ է պահել ուրիշի մը համար: Խելացի

կինը վարդագոյն ակնոց չի կրեր:

3) Տեսարաններ չես ստեղծեր: Խելացի կինը բաց է իր զգացմունքներու դրսեւորման համար: Եթէ կ'ուրախանայ՝ կ'ուրախանայ ամբողջ սրտով: Եթէ կը տխրի, նոյնպէս չի թաքցներ: Սակայն, խելացի կինը տեսարաններ չի ստեղծեր, իր զգացմունքները հրապարակաւ իցոյց չի դնել: Ան կը հասկնայ, որ եթէ ինք իսկապէս կը տառապի այդ տղամարդու կողքին, կը նշանակէ՝ ան իրը չէ: Իսկ մէկ դերասանով թատրոնը պէտք է անոր:

4) Խորթափանց ես: Կը զգաս սուտը ու լաւ կը ճանչնաս մարդոց, ուստի քեզ խաբելը դիւրին չէ: Բաց ես եւ պատրաստ՝ օգնութիւնդ առաջարկելու դժուար իրավիճակներու ժամանակ: Նախանձ չես եւ պատրաստ ես կիսելու ուրախութիւնդ:

Ուստի հետոյ շատ դիւրին է շփուիլ եւ ընկերութիւն ընել: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.



# ՄԱՐԶԱԿԱՆ

## Մոնտիալ-2018-ը Մնացել է Առանց Նախկին Ախոյեանների Եւ Փոխ-Ախոյեանների

Ռուսաստանում ընթացող ֆուտպոլի աշխարհի առաջնութեան 1/8 եզրափակիչ փուլի առաջին չորս խաղերից յետոյ մրցաշարում էլ մնացել մի խաղացող, որը նախկինում հանդէս է եկել մրցաշարի եզրափակիչ խաղում:

2014թ աշխարհի առաջնութեան ախոյեան Գերմանիան դուրս է մնացել արդէն իմբային փուլից, իսկ փոխախոյեան Արժենտինան պայքարը դադարեցրեց 1/8 եզրափակիչից:

Սպանիայի ընտրանին, որի կազմում դեռեւս հանդէս էին գալիս 2010թ աշխարհի վեց ախոյեանների, 1/8 եզրափակիչում չկարողացաւ յաղթահարել դաշտի տէրերի՝ Ռուսաստանի ընտրանու արգելքը:

Այդպիսով, ընթացիք աշխարհի առաջնութիւնում ի յայտ կը գան նոր ախոյեաններ եւ փոխ-ախոյեաններ:



## Մոլորիցիոն Ուրախ Է, Որ Մուճտիալում Ֆաւորիտները Չախոյուում ԵՆ

«Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրինիոն ուրախ է, որ աշխարհի առաջնութիւնում հօր հաւաքականները ձախողուում են:

«Հրաշալի է, որ որ մեծ թիմերը պարտուում են ու գնում ու լքում Մոնտիալը: Դա ապացոյցն է նրա, որ ֆուտպոլը թիմային խաղ է: Հաւաքականները չպէտք է կախուած լինեն մեծ աստղերից: Ժամանակակից ֆուտպոլում յաջողութեան են հասնում տակտիկապէս զրազէտ եւ կոլեկտիւ ֆուտպոլ դաւանող հաւաքականները:

Իսկ ինչ վերաբերում է տեսակրկնութեան VAR համակարգին, ապա կարծում եմ, որ բոլորը պէտք է յարգեն յատկապէս խաղադաշտում գտնուող մրցավարներին: Այն ֆուտպոլիստները որոնք պահանջում են վերստուգել գլխաւոր մրցավարի որոշումը, պէտք է դեղին քարտ ստանան: Ինչ նեարդայնացնում է այդ հանգամանքը», - ասել է Մուրինիոն:

## Արժենտինայի Հաւաքականի Գլխաւոր Մարզիչը Կը Զեռանայ

Ֆուտպոլի Արգենտինայի ազգային թիմի մարզիչ Խորխէ Սամպաոլին էլ շարունակի աշխատանքը:

Սամպաոլին նման որոշում կայացրել է Արժենտինայի ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահի հետ հանդիպումից յետոյ:

Այս մասնագէտը աշխարհի կրկնակի Ախոյեանների մարզում է 2017 թուականի Յուլիսից:

Արժենտինայի ազգային թիմը ֆուտպոլի աշխարհի առաջնութիւնում նախ մեծ դժուարութեամբ դուրս եկաւ խմբից՝ զրաւելով երկրորդ տեղը: Իսկ ահա 1/8 եզրափակիչում 3:4 հաշուով պարտուեց Ֆրանսային:



## Մոհամեդ Սալահը Երկարաժամկետ Պայայմանագիր Է Կնքել «Լիվերպուլի» Զետ

Եգիպտոսի հաւաքականի եւ «Լիվերպուլի» յարձակուող Մոհամեդ Սալահը նոր երկարաժամկետ պայմանագիր է կնքել անգլիական ակումբի հետ, հաղորդում է «Լիվերպուլի» պաշտօնական կայքը: Մանրամասները չեն հրապարակուում:

Մոհամեդ Սալահ «Լիվերպուլում» է հանդէս գալիս 2017 թուականից՝ կնքելով հինգ տարուայ պայմանագիր: Հենց առաջին մրցաշրջանում Սալահը 52 խաղում խփեց 44 կոլ:

Աշխարհի առաջնութիւնում Սալահը մասնակցեց երկու հանդիպման եւ խփեց երկու կոլ:



## Ֆաբրեգաս. Սպանիայում Այս Սերնդից Սպասում Էին Առնուագն Կիսաեզրափակիչ

Լոնտոնի «Չելսիի» սպանացի կիսապաշտպան Սեկ Ֆաբրեգասը մեկնաբանել է Սպանիայի պարտութիւնը աշխարհի առաջնութեան 1/8 եզրափակիչում: Սպանացիները յետխաղեայ 11 մեթրանոցներով պարտուեցին Ռուսաստանի հաւաքականին: Ֆաբրեգասը չէր ընդգրկուել

## Հայաստանի Հաւաքականը Դուրս Եկաւ Յաջորդ Փուլ

Աւարտուեց Եւրոբասկետ-2021-ի նախընտրական առաջին փուլը: Խմբային մրցաշարի 3-րդ տուրում Կիպրոսը սեփական հարկի տակ անսպասելիորէն 76:89 հաշուով գիջեց Լիւքսեմբուրգին, Շուեյցարիան էլ հիւրընկալուելիս 83:88 հաշուով գիջեց Սլովակիային:



Այս արդիւնքներից յետոյ Հայաստանի հաւաքականը դարձաւ ընտրական 1-ին փուլի 2-րդ տեղը գրաւած լաւագոյն ցուցանիշներով ընտրանին եւ դուրս եկաւ յաջորդ փուլ: Յիշեցնենք, որ ընտրական Ե ընթացքում հայ պասքետպոլիստները 2 անգամ յաղթել էին Ալբանիային եւ նոյնքան անգամ գիջել Դանիային:

Ընտրական 2-րդ փուլը կը մեկնարկի Սեպտեմբերի 13-ին: Հայաստանն ընդգրկուած է D ենթախմբում:

## Լեւոն Արոնեանը Դարձեալ Դուրս Է Լաւագոյն Տասնեակից

Շախմատի միջազգային ֆեդերացիան (ՖԻԴԵ) հրապարակել է շախմատիստների համաշխարհային դասակարգման աղիւսակը Յունիսին տեղի ունեցած պարտիաների արդիւնքում: Հայկական շախմատի առաջատար Լեւոն Արոնեանը 2767 գործակցով մնացել է 12-րդ տեղում:

Լաւագոյն Տասնեակ Մագնուս Կարլսեն (2842, Նորվեգիա), Ֆաբիանո Կարուանա (2822, ԱՄՆ), Շաքրիյար Մամեդյարով (2801, Ատրպէյճան), Դին Լիբեն (2797, Չինաստան), Վլադիմիր Կրամնիկ (2792, Ռուսաստան), Անիշ Գիրի (2782, Հոլանդիա), Ուեսլի Սո (2780, ԱՄՆ), Մաքսիմ վաշոէ-Լազարաի (2779, Ֆրանսա), Հիկարու Նակամուրա (2777, ԱՄՆ), Սերգէյ Կարյակին (2773, Ռուսաստան):



## Ռոջեր Ֆեդերերը 20 Տարի Անընդմէջ Ուիմբլդոնում Է

Շուեյցարացի Ռոջեր Ֆեդերերը, որը ախոյեանի իրաւունքով կը մասնակցի թենիսի Ուիմբլդոնի մրցաշարի բացման խաղին, 20-րդ տարին անընդմէջ հանդէս կը գայ Համանգլիական թենիսի ակումբի կորտերում:

Մինչ այդ, 20 անգամ Ուիմբլդոնում առանց ընդմիջման խաղացել էր ամերիկացի թենիսիստ Ջիմի Կոնորսը: Իսկ ահա ամերիկահայ թենիսիստ Անդրէ Աղասին 21 տարի անընդմէջ մասնակցել է ԱՄՆ-ի բաց առաջնութեանը: «Մեծ սաղաւարտի» մրցումներում նման կայուն մասնակցութիւն դեռեւս չի գրանցուել:

Յաւելենք, որ 2018թ թենիսի Ուիմբլդոնի մրցաշարը մեկնարկելու է Յուլիսի 6-ին: Բացման խաղում Ռոջեր Ֆեդերերը կը հանդիպի սերբ թենիսիստ Դուշան Լալովիչի հետ:



Սպանիայի հաւաքականի յայտացուցակում այս մրցաշարին: «Հէշտ յաղթանակ չէի սպասում, բայց Սպանիայի թիմը շատ աւելի ուժեղ էր, քան Ռուսաստանի հաւաքականը, որը ունէր ծրագիր եւ այն աշխատեց: Նրանց նպատակն էր դիմանալ մինչեւ յետխաղեայ 11 մեթրանոցները եւ աղօթել: Իհարկէ ցաւալի է տեսնել ընկերներիս այդ վիճակում: Ինչեստան վերջին հանդիպումն անցկացրեց հաւաքականում եւ արժանի չէր այդպիսի հրաժեշտի:

Սպանիայում մեծ ակնկալիքներ ունէին այս սերնդից: Բոլորը սպասում էին առնուազն կիսաեզրափակիչ: Ակնյայտ է, որ բոլորը հիասթափուած են: Սպանիան ունի տաղանդաւոր խաղացողներ եւ կարող էր աւելի լաւ հանդէս գալ: Թիմն ունի լաւագոյն պաշտպանութիւնը՝ երկուական խաղացողներ «Ռեալից» եւ «Բարսելոնայից»: Բուսկետսը լաւագոյն յենակետային կիսապաշտպանն է, ինչեստան ու Սիլվան. դժուար է գտնել նրանց դիրքերում աւելի ուժեղ խաղացողների: Սպանիայի հաւաքականի գլխաւոր մարզիչի պաշտօնանկութիւնն անկասկած ազդեցութիւն ունեցաւ: Ինչ այդ իրավիճակը կը կաշկանդէր», - Ֆաբրեգասի խօսքը մէջբերում է BBC-ն:

Յիշեցնենք, որ Մադրիդի «Ռեալի» հետ պայմանագիր կնքելուց յետոյ Սպանիայի հաւաքականի գլխաւոր մարզիչ Սուլէյն Լոպետեգին հեռացուեց ազգային թիմից: Նրան փոխարինեց Ֆերնանդօ Իերոն:



### Առաջին Անակնկալ Խնդիրները

Շարունակուած էջ 2-էն

խարհային շուկայում են վաճառել, այլ կիսել են իրար մէջ՝ էժանով գնելով ոսկին, որը յետոյ կրկնակի թանկացաւ: Հայաստանն այդպիսով զրկուեց ոսկու պաշարից եւ ստիպուած էր գրաւադրել ոչ թէ ոսկին ու արտարժոյթի պաշարները, այլ բնակչութեան եկամուտները 10%-ը:

Եւս մէկ խոշոր միջազգային սկանդալ է հասունանում: Ջերմուկում չեն դադարում Ամուլսարի շահագործման դէմ բողոքի ակցիաները: Ամուլսարի ոսկու հանքը բրիտանա-ամերիկեան կոնսորցիումին փոխանցելու մասին պայմա-

նագիրը նոյնպէս նախկին իշխանութիւններն են ստորագրել: Նոր կառավարութիւնը ստիպուած է հետեւել պայմանագրին՝ փորձելով հանգստացնել բնապահպաններին ու քաղաքացիական հասարակութեանը:

Փորձագէտները զգուշացնում են, որ այս հարցը հեշտութեամբ չի լուծուի, եւ կառավարութիւնը ստիպուած է լինելու կոշտ քայլերի գնալ: Նոր կառավարութիւնը դեռ կասկածի տակ չի դնում նախորդ իշխանութիւնների ստորագրած պայմանագրերը, թէեւ նախկինում դատապարտում էր դրանք:

«ԼՐԱԳԻՐ»

### Հարիւրամեայ Յանձնառութիւն

Շարունակուած էջ 6-էն

գործունէութիւնը կարելի է ամփոփել այն հասկացողութեամբ թէ մենք ինչպէս կարող ենք ազդել մեր ժողովուրդի հոգեւոր եւ ֆիզիքական բարեկեցութեան վրայ՝ Սուրիոյ թէ Արցախի, Մերձաւոր Արեւելքի թէ Եւրոպայի, Հայրենիքի թէ Ամերիկաներու մէջ:

Աւետարանչականը՝ «Հաւատարիմ մեր Ժառանգութեան եւ Ընդդէմ Ապագան» Faithful to Our Legacy and Embracing the Future

Կ'ուղղուի յառաջ: Եկեք քալենք միասին: Փառք Աստուծոյ եւ Յաւերժութիւն հայոց աշխարհին: Յունիս 1, 2018, Լոս Անձէլոս

### Միացեալ Նահանգները Պատրաստ է

Շարունակուած էջ 7-էն

նի, ուժեղ եւ դրական ազդանշան է գործարարներու համար, սակայն, տեւական փոփոխութիւններու համար անհրաժեշտ է ապահովել օրէնքներու եւ անոնց պահպանող կառույցներու հզօրութիւնը: Այս առումով Ռիչարդ Միլզը կը կարեւորէ նաեւ Հայաստանի մէջ ազատ եւ թափանցիկ խորհրդարանական ընտրութիւններու անցկացումը:

Անդրադառնալով գարնանը Հայաստանի մէջ տեղի ունեցած «թաւշեայ յեղափոխութեանը»՝ ԱՄՆ-ի դեսպանն ընդգծեց՝ ամե-

նակարեւորը, որ այդ հայ ժողովրդի ինքնուրոյն որոշումն էր.

«Դա հայեր էին, ովքեր դուրս եկան փողոց՝ պահանջելով աւելի թափանցիկ եւ արդարացի հասարակութիւն: Այդ խաղաղ պահանջը շատ տպւեղեցիկ էր: Պէտք է նշեմ, որ սա լիարժէք հայ ժողովրդի քայլն էր: Կարծում եմ, այն հնարաւոր եղաւ նաեւ, որովհետեւ ԱՄՆ-ի եւ Հայաստանի վերջին 20 տարիների համագործակցութեան արդիւնքում զարգացան եւ հզօրացան հենց այն ձայները, որոնք աջակցում էին թափանցիկութիւնն ու հաշուետւութիւնը»:

### ԻՆՉՊԵՍ Կ'ԱՁԴԵ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 17-էն

երբեք չեն բաժնուիր: Սակայն անոնց համար ալ թակարդ կայ: Անոնք կ'ամ կ'օգնեն իրար ճիշդ ընտրելու կեանքի ուղին կ'ամ, ընդհակառակը, կը շեղեն զուգընկերը ճիշդ ճանապարհէն:

16 տարուան տարբերութիւն կու տայ այսպէս կոչուած հայկաջին փոխկապակցուածութիւն, զուգընկերները կը լրացնեն իրար:

Անոնց միջեւ յարաբերութիւնները կրնան դասաւորուիլ ուսուցիչ-աշակերտ եղանակով: Սակայն, եթէ սէրը վերածուի ատելութեան, կրնայ յանգեցնել պատերազմի:

17 տարուան տարիքային տարբերութիւն ունեցող զոյգերու յարաբերութիւնները կը դասաւորուին այնպէս, ինչպէս 1 տարուան տարբերութեան պարագային: 18 տարին՝ 2 տարուան տարբերութեան ձեւով եւ այդպէս շարունակ:

#### ՅԱՄԱՍԻՍ

Արժ. Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Հայրաճեանի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու աշխատակազմը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ վաստակաշատ հոգեւորականի եւ ազգային բարերարի այրիին երէցկին Արփինէին եւ համայն պարագաներուն:

#### ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

### ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Տիար Ուատիհ Պութրոս Օր Ռիթա Մագմանեան  
Ամուսնացեալք, 29 Յունիս, 2018 Փաստիւնա  
Մեր ջերմ շնորհաւորութիւնները ամուսնացեալ զոյգին եւ անոնց ընտանեկան պարգանեարուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Աւետիս եւ Ալիս Մագմանեանին:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնել՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----


Country: -----

Tel: ----- Email: -----

Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net



ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ



**ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ**



**103-րդ ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ**

**«Մեր Յատակ Տեղականը՝ Ժողովրդավարական և Անկախ ՀԱՅԱՍՏԱՆ»**

Կազմակերպությամբ՝

**Ս.Դ.Հ.Կ. Փասատինայի Փարամազ Մասնաճիւղի**

Հովանավորությամբ՝

**Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի**

Գլխավոր Բանախօս՝

**Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչության Անդամ Գանատայէն**

**Ընկ. Կիրակոս Թիրթիւնճեան**

**Կիրակի Յուլիս 15 2018, Երեկոյան ժամը 5:00-ին**

**Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ**

**Կիրակոս Սրահ**

**2215 E. COLORADO BLVD., PASADENA, CA. 91107**

Գեղարուեստական Պատշաճ Յայտագիր

Մուտքը Ազատ